№ 184 ՈՒՐԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 25

1906

ՈՒՐԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 25 № 184

ԵՐԵՍՈՒՆԶՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օր'երից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարվում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Ռուսաց Կայսերական Երաժշտական Ընկերութեան
ԵՐԱԺՇՏԱԳԷՏ
ԴԱՇՆԱԿԱՀԱՐ
ՅՈՎՍԷՓ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ
Ելիզաւետինսկայա փողոց, 40.
Ընդունելութիւնը և պարապմունքները ամբողջ տարի
Վճարը՝ իր մօտ 9 ր. ամսական, իսկ տներում հրաւիրվելով 9 ր. ժամը։
(ա. օր.) 1—8
(առ.)

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
ԽԱԹԱԲԱԼԱ
Երգիծական-սատիրական շաբաթաթերթի բաժանորդագրութիւնը

Տարեկան գինն է Թիֆլիսում 4 ր., դուրսը՝ 5 ր., ½ տարվայ գինն է Թիֆլիսում 2 ր., դուրսը՝ 2 ր. 50 կ., երեք ամսվանը 1 ր., դուրսը՝ 1 ր. 25 կ.։

Ծան.—Սկզբում, մտադրվելով «Խաթաբալան» երկու շաբաթը մի անգամ լոյս ընծայել, տարեկան գինը որոշել էինք 2 ր. և 2 ր. 50 կ.։ Բայց այժմ, քանի որ այն շաբաթաթերթ դարձրինք, այդ պատճառով էլ գինը կրկնապատկում ենք։

Մենք ընդունում ենք և զանազան յայտարարութիւններ ամէն լեզուներով։

Վաճառվում է գաւառական բոլոր հայաշատ քաղաքներում։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, редакція «Хатабала».

Շաբաթ, օգոստոսի 26-ին, լոյս կը տեսնի № 12.

Խմբագիր-հրատարակող՝ Աստ. Երիցեան
(ու. կ.) առ. 1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինքնապաշտպանութեան խնդիրը. Վերջին տեղեկութիւններ. Թուրքերն իրար կոտորում են. Էջմիածնի համագումարը. Շարժումներ և հետևանքներ. Անկեղծ խոստովանութիւն. «Ինչ պէտք է անենք». Գործադուլներ Կարսում. Նամակ Գանձակից. Ախալքալաքն էլ կեղտոտվեց. Աններելի մոռացութիւն. Նամակներ Խմբագրութեան. Ներքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԱՆՆԱՄԻՐԱԿԱՆ. Հայ կեանքէն։

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

XVI

Մենք խօսեցինք նախկին հայ զինուորի և նոր ինքնապաշտպանի մէջ եղած տարբերութեան մասին։

Այդ տարբերութիւնը նշանակութիւն ունի կազմակերպութեան գործում։ Կարևոր է պարզ դնել նպատակը։ Հասարակութիւնը պէտք է իրան հարց տայ, թէ նա ի՛նչ տիպի ռազմիկներ է ուզում ունենալ՝ յատուկ զինուորներ՞, որոնց բան ու գործը միայն զինուորութիւնն է, թէ գիւղացիներ, որոնք հարկաւոր րոպէին կարող են իրանց զէնքով ասպարէզ գալ և ցոյց տալ դիմադրական ոյժ յարձակումների դէմ։

Մեր վերջին տարվայ փորձը մեզ տուեց այդ երկու տիպի պաշտպանների բազմաթեսակ օրինակներ։ Կային տեղեր, ուր գլխաւորապէս գործում էին տեղական ինքնապաշտպաններ տեղական խմբապետների ղեկավարութեան տակ. կային այնպիսիներ, ուր ամէն բան կատարվում էր կոմիտէտից նշանակված ղեկավարների անմիջական հրամանատարութեան տակ, և կային տեղեր, ուր գիւղացիները իրանք կազմակերպվել էին և միջոցներ ձեռք առել պատժելու ամէն մի յարձակում իրանց գիւղի վրա։

XVII

Որպէս զի հարցը աւելի պարզված լինի, ասենք մի քանի խօսք նաև այն տարբերութեան մասին, որ կայ հայդուկի և գիւղական ինքնապաշտպանի միջև։

Հայդուկը ամբողջովին նուիրված է մի գործի, որը նա համարում է իր կեանքի նպատակ, կամ գոնէ մերձաւոր նպատակը։ Նա զինուորագրված է այդ գործի համար, որը և կլանել է նրա էութիւնը։ Նա անձնուրաց է, պատրաստ ամէն րոպէ զոհվելու։ Նա աշխատում է այնպէս կապեր չը հաստատելու, որոնք նրան բևեռէին տեղի ու իրերի վրա, նա ձգտում է միշտ ազատ մնալ իր գործին գնալու համար։

Գիւղական ինքնապաշտպանը սովորական գիւղացին է, որի գլխաւոր նպատակը խաղաղ աշխատաւորի կեանքն է։ Նա ամենևին տրամադիր չէ ընդհարումների, արշաւանքների և ամէն տեսակ պատահարի, որ խոչընդոտ է հանդիսանում կեանքի սովորական ընթացքին։ Եւ եթէ նա իր ձեռքը զէնք է վերցնում՝ միայն ժամանակաւորապէս, մի քանի ժամով կամ օրով, որպէս զի յետ մղէ իր հանգստութիւնը խանգարող անպատեհութիւնները։

Հայդուկը խտացրել, մասնագիտացրել է այն գործը, որը կազմում է գիւղական ինքնապաշտպանների ամբողջ կեանքի ու գործունէութեան միայն մի փոքր մասը։

XVIII

Հայդուկները Անդրկովկասի համար չեն ստեղծվել մեզանում, այլ Թիւրքահայաստանի։ Նրանց կոչումը բոլորովին ուրիշ բնաւորութիւն ունէր և եթէ նրանք գործադրեցին իրանց ոյժերը ու գործունէութիւնը ինքնապաշտպանութեան գործում, դա պատմական հանգամանքների արդիւնքն էր։ Նրանք վերցրին իրանց վրա ինքնապաշտպանութեան գործում ղեկավարների կամ հրամանատարների դերեր։ Միացած ժողովրդի մէջ եղած պաշտօնաթող կամ պահեստի զինուորների հետ՝ նրանք դարձան կազմակերպող ոյժեր։

Բայց դրական արդիւնքների հետ, որ նրանք տուին սկզբներում և նախապատերազմական շրջանում, նրանք հանդէս բերին և բացասական կողմեր, որոնք ժամանակի ընթացքում առաջ բերին մի շարք անպատեհութիւններ։ Ինքնապաշտպանութեան գործը ստացաւ սխալ կազմակերպութիւն և փոխանակ դառնալու ժողովրդական, շեղվեց դէպի զուտ զինուորականութիւն և մասամբ հայդուկային կազմակերպութիւն։

XIX

Այստեղ անցողակի կարևոր ենք համարում նկատել հետևեալը։

Եթէ հայդուկութիւնը ինքը որոշ պատմական րոպէում դարձաւ ինքնապաշտպանական, այժմ հարց է ծագում՝ արդեօք Թիւրքահայաստանի փոխված պայմանները չեն թելադրում, որ հայդուկութիւնը փոխէ առհասարակ իր բնաւորութիւնը և նա դառնայ ինքնապաշտպանական ոչ միայն Անդրկովկասում, այլ և Թիւրքահայաստանում։

Այժմ, երբ մի կողմից յոյս է ծագում թէ Թիւրք ժողովրդի բողոքող ոյժերը կարող կը լինեն փոքր ի շատէ ազդեցութիւն ձեռք բերել պետութեան ընդհանուր վերակազմութեան խնդիրը առաջ տանելու և փոփոխութիւններ մտցնելու պետական կեանքի մէջ, իսկ միւս կողմից դժուարացած են նախկին հայդուկային գործունէութեան պայմանները, անհրաժեշտ է վերաքննել գործունէութեան սիստեմը։

Սակայն այս կէտը ուղիղ չէ վերաբերում մեր քննվող հարցին։ Այդ մասին մի ուրիշ անգամ։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Էջմիածին, օգոստոսի 24-ին

Համագումարը մշակում է ընդհանուր սկզբունքներ երեք սեկցիաների զբաղմունքների համար՝ դպրոցական, տնտեսական և վարչական հարցերի վերաբերմամբ։ Սեկցիաներն ընտրված են։ Քալանթարը, չը համաձայնվելով հիմնական հարցերի որոշման հետ՝ բողոք յայտնեց և հրաժարվեց համագումարին մասնակցելուց։ Վաղը ճանապարհ ենք ընկնելու։

Առաքելեան

—

Շուշի, օգոստոսի 20-ին

Տասն օր է, հայ և Թուրք խաղաղարար կոմիսիան հաշտութեան պայմաններ է մշակում։ Այստեղ են Թուրք բէգերի ներկայացուցիչները և Ախմէդ-բէկ Աղաեվ։ «Իրշադում» տպած նրա կոչը, որ մի հայհոյանք է, մի սպառնալիք Գոլոշչապօվի հասցէին, գեներալը տուեց նրան կարդալու իր ներկայութեամբ։ Աղաեվ կարմրեց, զղջաց և իր յատուկ փափախամտութեամբ յայտնեց, որ իրան հեռու լուրեր այլ կերպ են հասել, բայց անձամբ շօշափած իրականութիւնը հերքում է ամէն բան։ Նա խոստացաւ այդպէս էլ հերքել իր գրածը...

—

Շուշի, օգոստոսի 20-ին

Դեռ Էջմիածնի Կենտրոնական Ժողովի հրահանգներին ու մշակած կանոններին ենք սպասում, թէ ինչ պէտի տայ այդ ժողովը հասարակութեան ձեռքը, որ նա իրան ղեկավար ընդունէ իր դպրոցական, տնտեսական և վարչական գործերը կարգադրելու. այժմվանից Շուշու առաջնորդը ագենտներ է ուղարկել գիւղերը պրօպագանդա անելու, որ նոր ընտրութիւնների ժամանակ ժողովուրդը ձայն տայ՝ թէ մենք ցանկանում ենք, որ այժմեան առաջնորդը «իր սվիտայով ընտրվի» և մնայ իր պաշտօնում։

Բարի բազար...։

Ի հարկէ երբ մի հոգևորական իր գոյութիւնը պահպանելու համար այն աստիճան ստորանայ մի խումբ տղաների առաջ, որոնք Շուշու Դաշնակցութիւնն են կազմում, և ժողովուրդ, թեմ, գործեր մոռացած՝ գիշեր-ցերեկ նրանով զբաղվի, երբ մի առաջնորդ իրան թոյլ տայ հրապարակով թքել (տես «Ալիք» յունիս, նրա ստորագրած յօդուածը) հարուստ երեսին լոկ ուրիշներին հաճոյանալու համար և մնայ անպատիժ, իսկ իր մօտ մտնել ցանկացող գիւղական աղքատին ցասն ու վիշտը թոյլ չը տայ անձամբ յայտնելու և ինքը վերահասու լինելու, անկասկած այդպիսի հոգևորականը կընտրվի առաջնորդ։ Բայց որքան տարբերութիւն կայ Դաշնակցութեան և Աշոտ եպիսկոպոսի հայհոյանքների մէջ. Աշոտ եպիսկոպոսը իր գործերով, ուղղութեամբ և հայեացքով այնքան է դաշնակցական, որքան մի հայ իրան անուանի, գիցուր, եապօնացի։

Դաշնակցական եպիսկոպոսը չը պիտի թոյլ տայ, որ գիւղական քարուքանդ եղած ժողովուրդը կեղեքվի ու քայքայվի հոգևոր տուրքերի ծանրութիւնից յօգուտ առաջնորդական, վարդապետական և քարտուղարական «մեծաքանակ» ռոճիկների, չը տալով բանուոր գրագիրների հասարակ արհեստաւորին վայել վարձ անգամ... Աշոտ եպիսկոպոսը այնքան բացասական կողմեր ունի մեր ներքին կուլտուրական կեանքի համար, որ ո՛չ մի դաշնակցութիւն չը պիտի համաձայնվի նրա թեկնածութիւնը դնել. Նրա տեղն է աւելի վանքը, քան թեմը։ Նրա արժանաւորութիւնները, գործավարութիւնը, ղեկավարող ուղղութիւնը չեն կարող իրանց մէջ ժամանակակից գործողի և առաջնորդի ընդունակութիւնը որոնել և «սազ գալ» Դաշնակցութեան դեմոկրատիկ ծրագրին։ Մի՞թէ մեր մէջ քիչ վարդապետներ ու եպիսկոպոսներ կան աւելի աչալուրջ և արժանաւոր, քան այս մարդը։ Էլ ինչ կուլտուրա, ինչ սահմանադրութիւն, որ դրանց գործոնները «Աշոտների» մէջ պէտք է որոնենք...։

—

Շուշի, օգոստոսի 20-ին

Քօչը իջնում է սարից և անցնում է այբալուի ձորակով անփորձ ու հայերից անվտանգ։ Հետաքրքիր է թէ՝ ինչպէս կը վարվէին Աղդամի մօտով անցնելիս հանրակառքերի հետ, եթէ մի հայ սխալվէր և փորձէր այդ դժոխքն իջնել...։

Առհասարակ Շուշում և նրա գաւառում խաղաղ է։ Միայն եղանակ չէ անում, որ գիւղացիք կորեկը հաւաքեն, և փտում է։ Ցորենից զրկվել են, կորեկն էլ չեն կարողանում ձեռք բերել։ Ահա դժբաղդութիւն։

—

Հադրութ (Ջէբր. գաւ.), 16 օգոստոսի

Օգոստոսի 16 ին, առաւօտեան ժամի 8-ին, հաւար ընկաւ գիւղը, թէ 60 Թուրք յարձակվել են հայ դիրքապաններին վրա. հայ խմբերը իսկոյն գնացին և սկսվեց հրացանաձգութիւն, որը տևեց 4 ժամ։ Թուրքերը փախան։ Կան սպանվածներ։

Առաւօտեան, օգոստոսի 17-ին, լոյսը ծագելիս Թուրքերը մտան Մելիք-Ջանլու հայոց առաջին դիրքը, որտեղից սկսվեց հրացանաձգութիւնը. հաւարն ընկաւ գիւղը, հայ խմբերը գնացին օգնութեան Խէչօյին. խումբը բռնեց աջակողմեան թևը և սկսվեց տաք կռիւ. «Ջանասար» խումբը բռնեց ձախակողմեան թևը և երկու կողմերից սկսեցին թշնամուն կոտորել։ Հրացանաձգութիւնը տևեց 4 ժամ. Թուրքերը թողեցին դիրքը և մեծ կորուստով փախան։ Հայ խմբերն սկսեցին մտնել Ղարադօլու Թուրք գիւղը, շրջապատեցին գիւղը և սկսեցին կրակել ու հրդեհել. Թուրք խուժանը դիրք բռնեց Գուլլակ գիւղից, բայց իզուր. երբ Խէչօյի խումբը մտաւ Գուլլակ Թուրք գիւղը, Թուրքերը փախան։ Այրված է Ղարադօլու և Գուլլակ Թուրքաբնակ գիւղերը։ Թուրքերից սպանվածների և վիրաւորվածների թիւը հասնում է մինչև 40, իսկ մերոնցից վիրաւորված է 4 հոգի։

Ամսիս 18-ին, առաւօտեան ժամի 10-ին, գաւառապետ Ցիմբալով մէկ հարիւրեակ կօզակներով մեկնեց Հադրութ։

Տիգրան Գեանջումեանց

—

Զանգեզուրի գաւառի Ղափանի մասից սրտաճմլիկ լուրեր են ստացվում։ Ղափանը կատարեալ պատերազմական ասպարէզ է դարձել. հին դարերի մարդկային հրէշների գործած վայրագութիւնները նսեմանում են Թուրք աւազակախմբերի գործած սոսկալի գազանութիւնների առաջ. կոտորում են երեխաներին, ծերերին, պառաւներին, լկում են չահել կանանց, կոյս աղջիկներին, այրում են խոտի դէզերը, ցորնի ամբարները, տանհարում-տրորում են ցորենն ու գարու արտերը, իսկ հայ գեղջուկը, իր մոխրակոյտ դարձած տան փլատակների վրա յուսահատ, կուչ եկած, ողբում է իր թշուառ բաղդը։

Մասնաւոր նամակները գուժկանի նման նորանոր բօթերի մասին են պատմում. տասնեակ գիւղեր դժոխային տեսարան են պատկերացնում. գեղջուկի օգնութեան աղերսներին, անհելի ձորերի ու խիտ անտառների միջից, արիւնռուշտ հորդաների հրաշէկ գնդակներն են տեղում։

Կառավարութիւնը անզօ՞ր է, արդեօք, օգնելու կարօտեալներին հորդաների դէմ, թէ բացակայում է բարեացակամ ցանկութիւնը։ Դրանք հրատապ-սրտամաշ հարցեր են, որոնց մասին հպատակ հայ գեղջուկը աշխուժեամբ է մտածում։

Քիչ չէ նպաստում այդ ամենին և գաւառի դրութիւնը. Ղափանին զօրքերի օգնութիւնը պէտք է հասնէ ոչ թէ Գանձակից, այլ Օրդուբաթից, որտեղից աւելի յարմարութիւններ կան շուտով զօրք տեղափոխելու։

Օգոստոսի 16-ից գրած մի նամակով մեզ հաղորդում են, որ հայ-Թուրքական ընդհարումները նախ սկսվել են Ղաթարի պղնձահանքերից, որին համեմատաբար աւելի հեշտ էր Օրդուբաթից օգնել քան Շուշուց։

Քօչւոր Թուրքերը յարձակվում են Մելիք-Ազարեանցի հանքի վրա, որտեղի մի քանի ծառայողները 11 ժամ դիմադրութիւն են ցոյց տալիս։

Թուրքերը 20-ի չափ զոհեր տալուց յետոյ, անկարող լինելով ներս խուժել գործարանը, հրդեհում են նրան չորս կողմից։ Կրակի զոհ են գնում Մինաս Խօջամիրեանցը, մի ինժեներ և մի վարպետ, իսկ 4 հոգի ծառայողներից փախչելով ազատվում են։ Ահա այդ դէպքն էլ ծառայում է ազդանշանը հայ-Թուրքական ընդհարումների համար Զանգեզուրի գաւառի այդ մասերում։ Այնուհետև Թուրքական երեք զինված խմբեր քօչւորների հետ միացած յարձակումներ են գործում շրջակայ սակաւաթիւ հայ գիւղերի վրա։ Հայերը յամառ դիմադրութիւն են ցոյց տալիս, նոյն իսկ յարձակողական դիրքեր են բռնում և Թուրքերը ստիպված են լինում յետ նահանջել և պաշտպանել իրանց գիւղերը։

Թուրքերի մի խումբ Փիրդաւդան և Օխչի գիւղացիների հետ միասին, չը նայելով, որ հանդեցիներին հաւատացնում են, որ իրանք չեն հետևիլ Ղափանի Թուրքերի օրինակին և կապրեն սիրով հայերի հետ, յարձակվում է Քաջարանց գիւղի վրա։ Վերջիններս, երկար դիմադրութիւնից յետոյ, ստիպված են լինում փակվել եկեղեցում ու այնտեղ պաշտպանվել։

Թուրքերը թալանում են ու կրակի ճարակ դարձնում 70 տնից բաղկացած այդ հայ գիւղը։ Երեք օր շարունակ անկարելի է լինում օգնութիւն հասցնել, որովհետև Թուրքերը նախապէս բռնած են լինում յայտնի ճանապարհներն ու կիրճերը։

Գիւղը հրդեհելուց յետոյ Թուրքերը պաշարում են եկեղեցին ու պատրաստութիւն են տեսնում վառօդով պայթեցնելու։ Սակայն այդ միջոցին Գենուազի Թռուցիկ ռազմախումբը օգնութեան է հասնում։ Նա, անկարող լինելով մտնել ուղղակի Քաջարանց գիւղը, յարձակվում է նախ Աթրզ Թուրք գիւղի վրա, դիրքերից դուրս է քշում Թուրքերին, ապա հրդեհելով գիւղը, գնում է Օխչի Թուրք գիւղի վրա։ Մի քանի ժամվայ տաք կռուից յետոյ, գրաւում է գիւղը ու այրում։

Դրանից յետոյ միայն Քաջարանցը պաշարող Թուրքերը ստիպված են լինում յետ նահանջել և իրանց գիւղերին օգնութեան հասնել։

Ղափանի ձորում Թուրք հորդաների հետ, որոնց միացած են լինում Պարսկաստանից անցած աւազակախմբերը, ընդհարվում են հայ ինքնապաշտպանութեան խմբերը. Թուրքերը սաստիկ ջարդ կրելով փախչում են դէպի Արաքսի ափը։ Նրանց հալածում է տեղական ինքնապաշտպանութեան մի ուժեղ խումբ։

Չը նայելով այդ պարտութիւններին, այնուամենայնիւ Թուրք հարևանները ձեռք չեն քաշում իրանց թշնամական գործողութիւններից. Ղափանի ձորում սկսելով և մեծ կորուստներ ստանալով հանդերձ, նրանք այժմ սպառնում են Շիրվանի-ձոր հայ գիւղին, մինչև իսկ երկիւղ կայ, որ, մի գուցէ, մօտ օրերս յարձակում գործեն նրա վրա, որի հետևանքը միանգամայն ողբալի կարող է լինել։ Շիրվանի-ձորը գտնվում է Արաքսի մօտ, շրջապատված բաւականին բազմամարդ Թուրք գիւղերով. բացի դրանից, պարսկական Թուրքերի յարձակման առաջին զոհը կարող է դառնալ։ Եւ եթէ իսկապէս Թուրքերը յարձակվեն այդ գիւղի վրա, այն ժամանակ միանգամայն կարող է վտանգաւոր կացութիւն ստեղծվել Գենուազի Թուրք ազգաբնակութեան համար։ Անշուշտ, այդպիսի դժոխային դրութիւն ցանկալի չէ կարող լինել ոչ հայ ազգաբնակութեան համար և ոչ էլ, մանաւանդ, Թուրք հարևանների համար։ Հարուածը մահաբեր է երկուսի համար էլ։

—

Բագու, օգոստոսի 23-ին

Առաւօտեան բանւոր փողոցում, ձիաքարշի վագօնի մէջ, ատրճանակով սպանվել է պրիստաւի օգնական Զագօրօդնիյ։ Վիրաւորված է քաղաքապահը և ձիաքարշի ծառայողը։

(Հեռ. Գործ.)

—

Նախիջևան, օգոստոսի 23-ին

Հայ-Թուրքական ընդհարումը շարունակվում է մասնակի սպանութիւնների ձևով։

Աշխատանք չը կայ. կրէդիտը դժուարացել է. գիւղացիների դրութիւնը անտանելի է։

(Հեռ. Գործ.)

ԹՈՒՐՔԵՐՆ ԻՐԱՐ ԿՈՏՈՐՈՒՄ ԵՆ

Շուշի, օգոստոսի 21-ին

Շատ վաղուց է տարածված հասարակութեան մէջ, թէ Թուրքերն իրար կոտորում են։ Վերջին կռուի ժամանակ լսեցինք, որ մզկիթում, ժողովի ժամանակ, երկու Թուրք են գնդակահար արվել. իսկ կռուի ճգնաժամին մի «մեծ, անուանի» Թուրք է սպանվել դարձեալ իրանց Թուրքերի ձեռքով։

Պատճառները մութ էին։ Ոմանք բացատրում էին կռուի պատճառով ծագած անհամաձայնութեամբ, ոմանք էլ վերագրում էին անձնական թշնամական վրէժխնդրութեան, որի յարմար առիթ իբր համարել էին կռուի խառնակ և զինված դրութիւնը...։

Այժմ աւելի սարսափելի լուրեր են գալիս Աղդամի տափարակից։

Լամբարանում այս րոպէին կատաղի կռիւ է Թուրքերի մէջ. Դրանց մի մասը պատկանում է շիա աղանդին, իսկ միւսը՝ աւելի ուժեղ՝ սուննի։ Գիւղի միջով ձգված կամուրջը բաժանում է երկու մասին։ Սպանված են մօտաւորապէս 60—70 հոգի։ Աղդամից հասած կօզակները չեն կարողանում հրացանաձգութեան և կոտորածի առաջն առնել և կռիւը շարունակվում է։ Գոլօշչապօվից օգնութիւն են խնդրում։

Միաժամանակ կռիւ է բացվել աղդամեցիների և քեանգառլուեցիների մէջ և երկու կողմից սպանվել է 3 հոգի։ Դրանց մէջ կրօնական խտրութիւն չը կայ. երկուսն շիաներ են։

Բռնկված ընդհարումներն ու արիւնհեղութիւնները հետևանք են վաղուց Թուրքերի մէջ տիրող անհամաձայնութեան և տարբեր կարծիքների՝ հայ-Թուրքական կռուի վերաբերեալ։ Իսկ հետզհետէ առաջացած տնտեսական քայքայումը, պարզ է, որ մի օր պիտի հասցնէր կռուի տենդով բռնված տարբերին այդ դրութեան։ Մի կողմը գրգռում է ամբոխին և ոգևորում նրան, հրապարակ նետում աւար անելու, հարստանալու ցնորքներով, իսկ միւս կողմը՝ գրգիռներով խաբվող ամբոխը յետ է փախչում կռուի դաշտից պարտված ու պատռված, թողնելով իր ետևում անհամար դիակներ և գտնելով իր տանը քանդված ու մերկ երեխաներ։

Հապա ի՞նչ պիտի լինէր դրա հետևանքը։

Ամիսներ շարունակ նա թողած դաշտ ու այգի, հօտ ու նախիր և նստած իր ձիու վրա անմիտ կռիւ է մղում և բէգերի հրամանին սպասում այս կամ այն կողմը քշելու ձին։ Հարկաւ մի օր պիտի յետ գնար նա, մտնէր իր տունը, տեսնէր դրութիւնը, արիւնը գլխին տար և կատաղած դուրս վազէր իր տնաքանդութեան վրէժը իրան ուղարկողից և ոսկու հանքեր խոստացողից լուծելու...։

Միտսար

ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

VI

Օգոստոսի 19-ի նիստը

Նիստը բացվում է առաւօտեան ժամը 9½-ին։

Խօսքը տրվում է Թումանեանին։

Յ. Թումանեան (պատգամաւոր Բեսարաբիայի, սօցիալ-դեմօկրատ). Կենտրոնական ժողովի իրաւասութեան և նրա զբաղմունքների նկատմամբ նախորդ մի քանի ճառախօսների ասածներից ես եկայ այն եզրակացութեան, որ կենտրոնական ժողովը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի սահմանադիր ժողով տնտեսական, դպրոցական և վարչական գործերի համար։

«Նախ և առաջ անհրաժեշտ է պարզել՝ թէ ինչ է սահմանադիր ժողովը այդ երկու բառերի իսկական իմաստով։ Սահմանադիր ժողովը միանգամայն ժխտելով մի հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող հին, այլևս անպէտք կարգերը, ստեղծում է նորը՝ երբէք չը ճանաչելով կողմնակի ոչ մի ճնշող պայման, ո՛չ մի արտաքին բացասական ազդեցութիւն։ Նա ինքնագլուխ կերպով որոշում, տնօրինում է իրան ընտրող ժողովրդի բաղդը, ինքնագլուխ մշակում է այնպիսի օրէնքներ, որոնց գործադրութիւնը յանձնվում է մի գործադիր մարմնի, որ անհրաժեշտօրէն մտցնում է այդ օրէնքները կեանքի մէջ։

«Դառնալով մեր կենտրոնական ժողովի իրաւասութեան խնդրին, քննենք նախ այն հարցը, թէ այս պատգամաւորական ժողովը կարո՞ղ է կարգադրիչ և տնօրէն համարվել դպրոցական, տնտեսական և վարչական գործերի նկատմամբ նոյնիսկ կոնդակների գծագրած սահմաններում։

«Քննելով իւրաքանչիւր հարց առանձին-առանձին կը տեսնենք, որ տնտեսականը—եկեղեցական-վանքական հողերի հարցի լուծումը կախված է առաջիկայում կազմվելիք Պետական Դումայից, վարչականը—եթէ ուզենանք փոխել այդ վարչական կազմը, ձեռքը պիտի տանք սինօդի, կօնսիստօրիաների, և այլ փայլաս-հիմնարկութիւնների, և հէնց այստեղ արդէն մենք պիտի հանդիպենք այն խոչընդոտներին, որոնք միշտ դամօկլեան սրի պէս կախված են գլխի վերևում։ Ուրեմն այս երկու հարցերի նկատմամբ էլ Կենտրոնական Ժողովը չէ կարող լինել ո՛չ միայն սահմանադիր, այլև կարգադրիչ ու տնօրէն որոշ շրջանակում։

«Երրորդ հարցը սակայն — դպրոցականը — միակն է հարցերից, որը հայ աշխատաւոր մասսաների տեսակէտից մասամբ միայն կարող է դրական լուծումն ստանալ ժամանակաւոր կերպով։ Բայց ասում են դա էլ պալիատիվ է, կիսամիջոց, շրջանակը դարձեալ սովորական սուինններով է շրջապատած։

«Այս բոլորից յետոյ կարծեմ պարզ է այն հանգամանքը, որ բռնակալական ներկայ րեժիմում վերոյիշեալ երեք խնդիրների նկատմամբ այս ժողովը չէ կարող երբէք յայտարարվել սահմանադիր։ Հակառակ դէպքում մենք շինած կը լինենք օդային ամրոցներ, որ ծիծաղելի է։

«Մենք չենք մոռանում առհասարակ մի խոշոր հանգամանք։ Մենք ներկայումս պատմական մի այնպիսի նշանաւոր մոմենտում ենք ապրում, մեր վիճակը, մեր ամբողջ ապագան այնքան սերտ կերպով կապված է այդ պատմական խոշոր ակտի, այն է՝ ռուսական մեծ յեղափոխութեան, որ չենք կարող առանձնանալ, անջատվել և մեր իւրաքանչիւր քայլը, այն էլ պատմական նշանակութիւն ունեցող քայլը, չը քննել այդ անխուսափելի իրականութեան տեսակէտից։ Հարց եմ տալիս։ Ի՞նչ է ներկայացնում մեր կենտրոնական ժողովը մեծ յեղափոխութեան տեսակէտից, այն ժողովը, որը առանց որևէ իրաւաբանական, տիրող օրէնքների սահմանը ճանաչելու, տնօրինելու յաւակնութիւնն ունի հայ ժողովրդի բաղդը՝ նրա տնտեսական, վարչական և կուլտուրական պահանջների նկատմամբ։ Այդ «սահմանադիր» ժողովը գրչի մի հարուածով ոչնչացնելու է այն կաշկանդումները, որի հեղինակներն են եղել ներկայ արիւնարբու բիւրոկրատիայի բռնակալ նախահայրերը...

«Խոստանալով մի այդպիսի խոշոր բան հայ ժողովրդին, նա միանգամայն մոռանում է, որ նոյն բիւրոկրատիան նոյնպէս գրչի մի հարուածով կոչնչացնէ մի ողորմելի սահմանադիր ժողովի որոշումները։ Անգործնական, նոյն իսկ մի անհեթեթ քայլ է հայ աշխատաւոր մասսայի շահերի տեսակէտից ներկայ Կենտրոնական Ժողովի գումարումը, մի այնպիսի մոմենտում, երբ մեր գլխաւոր ուշադրութիւնը մենք պէտք է դարձրած լինենք այն ընդհանուր թշնամու դէմ, որը մեր իւրաքանչիւր ազատ քայլը՝ աշխատաւորի, ճնշվածի, շահագործվողի համար տեղն ու տեղը շանթահարում է. մենք ընդհակառակը կենտրոնական ժողովով առանձնացնում ենք հայ ժողովրդին ընդհանուր ազատագրական գործից և իլլիւզիաներով, խաբուսիկ յոյսերով օրօրում ենք նրան։ Պարոններ. կենտրոն. ժողովը Ռուս. մեծ յեղ. տեսակէտից ըստ իս՝ իբրև սահմանադիր ֆունկցիաներ ունեցող մի համագումար՝ ներկայացնում է մի վերին աստիճանի յետադիմական քայլ, ռէակցիոն ձեռնարկութիւն։ Փոթորկից առաջ չարագուշակ լռութեան մէջ ենք ապրում. վաղը—միւս օր բռնկվելու է ընդհանուր յեղափոխութիւնը, մենք պէտք է պատրաստենք, կազմակերպենք հայ յեղ. մասսաները և միացնելով պատրաստ յեղափոխական մասսաների հետ՝ այդ խեղճ դեսպոտի գլուխը ընդմիշտ ջախջախենք»:

Խօսքը տրվում է Հ. Առաքելեանին:

Հ. Առաքելեան (պատգամաւոր Նուխու). Մեր առաջ դրված է վերին աստիճանի լուրջ և ծանրակշիռ հարց—ներկայ ժողովի «իրաւասութեան» հարցը. ուստի, ներողամիտ եղէք, եթէ ես փոքր ինչ աւելի կանգ կառնեմ այդ հարցի վրա:

«Դրված է երկու գլխաւոր հարց—1) ինչ տեսակ ժողով է սա, ինչ ֆունկցիաներ և ձեռնհասութիւն կամ իրաւասութիւն ունի, արդեօք սա սահմանադիր է, համազգային, ազգային-եկեղեցական, թէ՞ լոկ ռուսահայոց մի կենտրոնական պատգամաւորական ժողով. ուրիշ խօսքերով—դրված է ներկայ ժողովի կօմպետենցիայի և իւրիսդիկցիայի հարցը. 2) որքան ներկայ ժողովը իր այժմեան կազմով կարող է բարոյական հեղինակութիւն վայելել հայ ժողովրդի աչքում և լինել նրա իսկական իղձերի, ցանկութիւնների, պահանջների արտայայտիչ և ճշգրիտ թարգման.

«Ես, անձամբ, և իբրև ներկայացուցիչ մի որոշ հոսանքի և ուղղութեան, կողմնակից եմ եղել այս ժողովի գումարման, ենթադրելով, որ նա կը գումարվէր բոլոր այն նորմալ և օրինական պայմանների մէջ, որոնք անհրաժեշտ են մի ժողով իսկական ներկայացուցչութիւն համարելու:

«Այստեղ երկու տրամագծօրէն հակառակ կարծիքներ արտայայտվեցին. մի մասը համարում է ներկայ ժողովը լոկ խորհրդակցական, միւս մասը տալիս է նրան լիազօր, սահմանադիր որոշումն:

«Ամէն մի խնդրի անաչառ, օբեկտիվ լուսաբանութեան համար, անհրաժեշտ է ծանօթանալ նրա ծագման, նրա գենեզիսի հետ, ուստի թոյլ տուէք ինձ մի համառօտ պատմական ակնարկ ձգել եկեղեցու և ազգային-եկեղեցական գործերի կառավարութեան խնդրի վրա:

«Հնումն, նախքան ստացումը այն օրէնսդրութեան, որով կառավարվում է հայ-լուսաւորչական եկեղեցին Ռուսաստանում 1836 թւից ի վեր, այն է նախքան «պօլօժենիան», եկեղեցին և ազգային-եկեղեցական գործերը կառավարվում էին կաթողիկոսի ձեռքով. որը, սակայն, իր կողքին ունէր մի խորհրդատու մարմին, բաղկացած հեղինակաւոր եպիսկոպոսներից և վարդապետներից: Կաթողիկոսի ընտրութիւնը չէր կատարվում ժողովրդական ընտրութեան լայն հիմունքների վրա, ինչպէս ներկայումս: Ազգի մի քանի իշխանաւորներ, առաջնորդներ, մէլիքներ Էջմիածնի միաբանութեան և մի քանի յայտնի վանքերի առաջնորդների հետ միասին ընտրում էին կաթողիկոսին: Դա առաջին շրջանն է: Երկրորդ շրջանը—«պօլօժենիայի» շրջանն է: Պօլօժենիան —պէտք է խոստովանել, կանոնի տակ դրեց այն կարգերը, որոնցով կառավարվում էր մինչև այդ եկեղեցին, իսկ կաթողիկոսի ընտրութեան գործում նա հանդիսացաւ թարգման եկեղեցու հին աւանդութիւնների և ոգու, դնելով այդ ընտրութիւնը ամենալայն ժողովրդական-համազգային հիմունքների վրա: Դրանից յետոյ գալիս է երրորդ շրջանը—շրջան Ներսէս Աշտարակցի, Մատթէոս և Գէորգ կաթողիկոսների, որ ես անուանում եմ ժողովրդասէր շրջան, ժողովրդասէր այն պատճառով, որ այդ երեք կաթողիկոսների օրով ժողովրդին տրվեց մասնակցութեան ամենալայն իրաւունք՝ դպրոցական-եկեղեցական գործերում: Ներսէս կաթողիկոսը հաստատեց ժողովրդական հոգաբարձութիւն Ներսիսեան դպրոցի համար: Մատթէոս կաթողիկոսը տուեց Ղարաբաղի դպրոցին ամենաազատամիտ կանոնադրութիւն, Գէորգ կաթողիկոսը տուեց կանոնադրութիւնը ծխական դպրոցների ժողովրդական կառավարութեան համար: Չորրորդ շրջանը—Մակար և ներկայ Մկրտիչ կաթողիկոսների շրջան—ես անուանում եմ հակաժողովրդական շրջան: Մակար կաթողիկոսի օրով առաջին անգամ լուրջ ձգտումներ և ջանքեր գործ դրվեցին սահմանափակել ժողովրդի մասնակցութեան իրաւունքը ազգային-եկեղեցական գործերում. յայտնի է նրա հրատարակած ծխական-դպրոցական նոր կանոնադրութիւնը: Ժողովրդական իրաւունքների դէմ լուրջ ոտնձգութիւններ և իրական սահմանափակումներ եղան ներկայ Կաթողիկոսի օրով, որից ամենից քիչ սպասելի էր այդպիսի մի քայլ. չը մտնենք այդ հարցի կամ կերպարանափոխութեան քննութեան մէջ: Ես կարծեմ, հարկ չը կայ ապացոյցներ առաջ բերել. ում յայտնի չեն Շուշու դպրոցի, Ներսիսեան դպրոցի դէպքերը. ում յայտնի չէ, հակառակ հոգաբարձութեան տեսուչներ նշանակելը, ընտրական հոգաբարձութիւնների կազմի մէջ նշանակովի հոգևորականներ մտցնելը:

«Թէ այդ ձգտումները և թէ եկեղեցու կառավարութեան մէջ մտած բազմաթիւ զեղծումները, վերջապէս ժամանակի ոգին և ուղղութիւնը, վաղուց հրամայողական պահանջ էին առաջացրել գումարել ազգային-եկեղեցական սահմանադիր ժողով, հին սահմանադիր եկեղեցական ժողովների նման, որ սահմանէր նոր լաւագոյն կարգեր և կանոններ:

«Այդ պահանջը արտայայտեց ոչ միայն Ռուսաստանի, այլ և օտար երկիրների հայ ժողովուրդը, մամուլը և հասարակական կարծիքը. նա դարձաւ անյետաձգելի պահանջ, սակայն, անհնարին եղաւ իրագործել թէ Մակարի և թէ ներկայ Կաթողիկոսի 13 ամեայ հայրապետութեան ընթացքում: Վերջապէս, Կաթողիկոսը ինքնաբերաբար, թէ որոշ ազդեցութեան ճնշման ներքոյ (այդ հարցը քննելու տեղը չէ) տեղի տուեց այդ հրամայողական պահանջին և հրատարակեց մեզ յայտնի 3 կօնդակները, որոնց հետևանքը եղաւ ներկայ ժողովը:

«Ուրեմն սահմանադիր, ժողովրդական-ներկայացուցչական ժողով գումարելու պահանջը վաղուց արտայայտված մի իմպերատիվ պահանջ է: Այժմ տեսնենք կարո՞ղ է ներկայ ժողովը ունենալ այդ ֆունկցիան և բարոյական հեղինակութիւն:

«Նախ՝ սա համազգային ժողով չէ, որովհետև չը կան Թիւրքիայի, Պարսկաստանի, Ամերիկայի և այլ երկիրների հայերի ներկայացուցիչները. երկրորդ՝ սա և ռուսահայերի ազգային ժողով չէ, որովհետև չը կան ազգի միւս հատուածների—կաթօլիկ և աւետարանական հայերի ներկայացուցիչները: Սա լոկ լուսաւորչական-հայերի պատգամաւորական ժողով է: Երրորդ, այս ժողովը չէ կարող կոչվել սահմանադիր, որովհետև սահմանադիր կոչվում է այն ժողովը, որ ինքն օրէնքներ է սահմանում և զօրութիւն ունի այդ օրէնքները գործադրելու: Եւ երէկ պ. Մ. Յարութիւնեան շատ պերճախօս կերպով ապացուցեց ձեզ, որ, շնորհիւ տիրող օրէնքների, մենք ինչ օրէնքներ էլ որ սահմանելու լինենք, չենք կարող գործադրել տալ, որովհետև չունենք այդ ոյժը և իրաւասութիւնը: Ուրեմն սա սահմանադիր ժողով չէ և չէ կարող լինել: Չորրորդ՝ սա և ազգային ներկայացուցչական ժողով չէ, որովհետև ընտրվել է այնպիսի աննորմալ պայմանների մէջ, որ չէ կարող համարվել ժողովրդի մեծամասնութեան և իսկական պահանջների ու կարիքների արտայայտիչ և թարգման: Բերենք մի քանի փաստեր. 1) ընտրութիւնները նշանակված էին շատ անյարմար ժամանակ, երբ գիւղացիական ստուար մասը զբաղված էր դաշտային և հողագործական աշխատութիւններով, իսկ քաղաքների ծխականները բացակայ էին եղել. 2) ոչ մի տեղ պատրաստված չէին եղել լիակատար ցուցակներ 21 տարեկան ծխականների. 3) հայ ժողովրդի կէսը, իգական սեռը, որ ընտրական իրաւունք է ստացել, չէ մասնակցել ընտրութիւններին, շատ քիչ բացառութեամբ. 4) ընտրութիւնները կատարվել են ծխականների շատ աննշան թւի մասնակցութեամբ, օրինակ, եղել են հարիւրաւոր ծխատէր եկեղեցիներ, ուր պատուիրակը ընտրվել է 8 ձայնով. 4) ոչ մի տեղ ընտրողներին չեն առաջարկվել ծրագիրներ, չեն պարզվել այդ ծրագիրները. 5) շատ տեղերում ընտրութիւնների ժամանակ գործ են դրվել ճնշումներ, բռնութիւններ և ընտրութիւնները չեն եղել ազատ ու գիտակցական:

«Այս այսպիսի աննորմալ ու ապօրէն պայմանների մէջ կատարված ընտրութիւնները չէին կարող տալ մեզ ժողովրդի իսկական ներկայացուցչութիւն և ընտրված պատգամաւորները չեն կարող համարվել ժողովրդի կարիքների, պահանջների, իղձերի արտայայտիչներ. հետևաբար այս ժողովը ձեռնհասութիւն չունի լուծել այնպիսի հիմնական հարցեր, որոնք պէտք է յեղաշրջեն ժողովրդի ամբողջ կեանքը և չէ կարող վայելել բարոյական հեղինակութիւն ժողովրդի աչքում, իսկ դա անհրաժեշտ պատճառ է, որպէս զի մեր վճիռները գործադրվեն կեանքի մէջ: Թէ ներկայ ժողովը բարոյական հեղինակութիւն և ժողովրդականութիւն չէ վայելում, դրա պերճախօս ապացոյցն այն է, որ բացվում է ռուսահայոց առաջին կենտրոնական-պատգամաւորական ժողովը և մենք ստանում ենք միայն 15—20 շնորհաւորական հեռագիրներ:

«Սակայն ներկայ ժողովը այնուամենայնիւ կարող է օգտակար գործ կատարել. նա կարող է զբաղվել մի քանի անյետաձգելի հարցերի, օրինակ դպրոցական և թեմական ընտրութիւնների հարցերի մշակմամբ. նա կարող է մշակել, խմբագրել դպրոցական ծրագիր և կանոնադրութիւններ, պատրաստել նիւթեր ապագայ, աւելի հեղինակաւոր ազգային-եկեղեցական ժողովի համար:

«Ամփոփելով մեր ասածները, մենք եզրակացնում ենք.

«Նկատելով որ ներկայ ժողովը գումարված է աննորմալ պայմանների մէջ.

«Նկատելով որ ընտրութիւնները նշանակված են եղել շատ աննպաստ և անյարմար ժամանակ, երբ գիւղացիական ստուար մասը զբաղված է եղել դաշտային և հողագործական աշխատութիւններով, կամ ենթարկված սարսափի հայ-թաթարական ընդհարումների պատճառով, երբ քաղաքներում ծխականներից շատերը բացակայ են եղել, փնտրած լինելով ամառանոցներ.

«Նկատելով որ ոչ մի տեղ պատրաստված չեն եղել 21 տարեկան (արանց և կանանց) ծխականների լիակատար ցուցակներ.

«Նկատելով որ ժամանակի սղութեան պատճառով շատ տեղերում օրինաւոր կերպով յայտարարութիւն չէ եղել, գոնէ կօնդակի տրամադրութեամբ 2 շաբաթ առաջ չէ յայտարարվել.

«Նկատելով որ իգական սեռը չէ մասնակցել ընտրութիւններին (շատ աննշան բացառութեամբ).

«Նկատելով հետևաբար, որ ընտրութիւններին մասնակցել է ազգաբնակութեան նուազագոյն մասը.

«Նկատելով բացի դրանից, որ շատ տեղերում, ընտրութիւնների ժամանակ, գործ են դրվել ճնշումներ, բռնակալական ազդեցութիւններ, հետևաբար, ընտրութիւնները չեն եղել ազատ ու գիտակցական, և ընտրվել են պատգամաւորներ այնպիսի անձինք, որոնք բոլորովին անծանօթ են իրանց ընտրող վիճակների ժողովրդի դրութեան, կարիքներին և իղձերին,

«Ես գտնում եմ, որ 1) ներկայ պատգամաւորներից շատերը չեն կարող համարվել ժողովրդի իսկական ներկայացուցիչներ, նրա իղձերի ճշգրիտ թարգմաններ, 2) ներկայ ժողովը չէ կարելի ընդունել իբրև սահմանադիր ժողով, որի որոշումները կարողանային վայելել ազգի մէջ բարոյական հեղինակութիւն և պարտադիր լինել ամենքի համար:

«Հետևաբար առաջարկում եմ 1) համարել ներկայ ժողովը խորհրդակցական և նախապատրաստական նիւթեր մշակող, ծրագիրներ պատրաստող. 2) կատարել տալով նոր ընտրութիւններ, պահպանութեամբ բոլոր անհրաժեշտ պայմանների, ազատ ամեն ճնշումներից, գումարել առաջիկայում իսկական ազգային-եկեղեցական սահմանադիր ժողով:

«Սակայն, ի նկատի ունենալով, որ նոր ազգային համաժողովի գումարումը կարօտ է երկար ժամանակի, բայց կան անյետաձգելի հարցեր—դպրոցական, կալուածների բարւոք կառավարութեան և թեմական ընտրութիւնների կանոնաւորման կամ «ընտրական կօդէկս» մշակելու հարցերը, ես հնարաւոր եմ գտնում և օգտակար, որ ներկայ ժողովը զբաղվէր այդ հարցերի քննութեամբ և լուծմամբ»:

Ց. Ամիրխանեան (Թիֆլիսի պատգամաւոր) զարմանում է, որ ժողովրդի ներկայացուցիչները կամենում են կրճատել իրանց իրաւունքները. կօնդակը ոչ մի տեղ չէ թողնում, որ սա կանոնադիր ժողով է, մինչև անգամ յիշված է, որ նա պէտք է հաստատէ կանոնադրութիւն կազմէ: Տարօրինակ է, որ բողոքողները, այս ժողովին սահմանափակ իրաւունք տալողները, եկել մասնակցել են այս ժողովին. «ես դրա մէջ յետին միտք եմ տեսնում» (նախագահը ի կարգ է հրաւիրում). Ապա նա բողոքում է և զրպարտութիւն է համարում Դաշնակցութեան դէմ եղած յարձակումները՝ բռնութիւններ գործելու մասին: (Լսվում են բողոքների ձայներ «զրպարտութիւն» խօսքի դէմ):

Գէորգ մարկոսեան Զօրեկեան (Բեսարաբիայի պատգամաւոր).—Երէկ երեկոյեան պատգամաւորական ժողովում քննութեան առաջարկվեց նախագահի կողմից այն հարցը թէ կենտրոնական ժողովը ինչ բնոյթ ունի:

«Յայտնի կուսակցութեան լիդերներից երկուսը՝ պ. պ. Ահարոնեանը և Թափչեանը փորձեցին հաստատել ժողովի սահմանադիր իրաւունքը: Նրանցից առաջինը հիմնվում էր կօնդակի զանազան յօդուածների վրա՝ ապացուցանելու համար նրա սահմանադիր բնոյթը. իսկ երկրորդը ամենևին կարիք չը տեսաւ փաստօրէն հաստատելու նրա սահմանադիր բնաւորութիւնը, այլ նպատակ էր դրել մի երկար միտինգային բնաւորութիւն ունեցող ճառով յուզել ժողովրդին, յուզեց և արժանացաւ համամիտ ժողովականների բուռն ծափահարութեանը:

«Բազմաթիւ ճառախօսներից միայն պ. Սամսօն Յարութիւնեանն էր, որ որքան համոզիչ փաստերով ցոյց տուեց՝ թէ ներկայումս ի նկատի ունենալով ներկայ ըէժիմը, անհնարին է ընդհանրապէս ունենալ սահմանադիր ժողով, որ անկախօրէն կարգեր սահմանէ, օրէնքներ հրատարակէ և գործադրէ կեանքի մէջ:

«Ցոյց տուեց նոյնպէս թէ ներկայ պատգամաւորական ժողովը կարող չէ իսկական ժողովրդական ներկայացուցիչների իրաւունքը վայելել, քանի որ ժողովրդի մեծամասնութիւնը մասնակցած չէ ընտրական ժողովներին. իսկ մասնակցողներին էլ մինչեւ տված չէ եղել գիտակցաբար ընտրելու մի այնպիսի պատգամաւոր, որ մասնակցողների իսկական և ոչ երևակայական կամքը արտայայտէր: Մանրամասնութիւնների մէջ չեմ մտնի նոյն մտքերը կրկնած չը լինելու համար, այլ կը պատասխանեմ ընդհանուր առմամբ հակաճառողներին, որ միայն ու միայն ցանկութիւններ էին յայտնում՝ միշտ խուսափելով ապացուցանելու՝ թէ ինչպէ՞ս իրանց բարի ցանկութիւնները պիտի իրագործեն.

«Ներկայ ռուսական ազատագրական շարժումներով ոգևորված և ներշնչված մեր երիտասարդութիւնը ինքն էլ է կամենում յեղափոխական լինել, բայց հայկական կեանքի մէջ. ուստի ստեղծում է մի երևակայական ոյժ, որ իբր թէ ճնշում է հայի ազատ հոգին (միտքն ու կամքը), որ կեղեքում է նրան. և այդ ոյժը համարվում է հոգևորականութիւնը, որի պետը ինքնակալաբար իր սահմանադրական կօնդակով հրաւիրում է հայ ժողովրդին ինքնավար կերպով տնօրինելու իր ներքին կեանքը, որոշելու իր բաղդը. այսինքն տալիս է պետը այն՝ ինչ որ իրապէս չունի ինքը: Ի՞նչ ոյժ է ներկայացնում խեղճ կղերը, որ փորձեց իր կարծիքը յայտնել հայրապետական կօնդակի մասին և մի շարք անտեղի յարձակումների տարափի տակ՝ յետ նահանջեց, մինչև իսկ հրաժարվեց իր համոզմունքից: Այս բոլորից յետոյ ասել՝ թէ կղերը իր պետով ճնշող ոյժ է՝ ստուգագն յանցանք է, եթէ չասեմ ծիծաղելի: Ինչու, պարոններ, հայկական Դաւիթ ձևանալու համար՝ ձեր դէմ եղած մանուկին հսկայ Գողիաթի տեղ էք դնում:

«Մի բան միայն ճշմարիտ է, այդ այն է, որ մեր ներքին կեանքի մէջ շատ հասունացած խնդիրներ կան՝ և՛ դպրոցական, և՛ կալուածական, և՛ եկեղեցական-վարչական, և՛ նոյն իսկ բուն եկեղեցական, որոնց լիովին լուծում տալու համար պէտք է մի ընդհանուր ազգային-եկեղեցական ժողով, որ այժմ՝ շատ պարզ է, տեղի ունենալ չէ կարող: Բայց սրանից աւելի հասունացած է ազատ ազգային կուլտուրական զարգացման պահանջը (բառիս ընդարձակ իմաստով), և մեր խեղճ գիւղացու տնտեսական ապահովութեան խնդիրը, այն իսկ լոկ տնտեսութեան. որի ալիքորդ բեկորներն են միայն այսօր մնացել: Այս բոլորին ընդհանուր համառուսական շարժումը կարող է գոհացում տալ. ոյժ էք զգում, պարոններ, միացէք և արժանանաք թէ հայի և թէ ռուսի համակրանքին. ոյժ չէք զգում՝ գոնէ լռեցէք և հրաժարվեցէք և արէք այն՝ ինչ կարող էք, որ ծիծաղելի չը դառնաք:

«Դուք ժողովի սահմանադիր իրաւունքը հիմնում էք կօնդակի վրա. դեռ երէկ էր, պարոններ, որ Հայրապետը իր գահական ճառի մէջ ասաց «արէք այն ինչ որ կարելի է, գործեցէք խոհեմութեամբ՝ կշռելով ներկայ պայմանները, հեռու եղէք յանդուգն քայլերից»: Այս այն Հայրապետն է, որ քանի մի ամիս առաջ արձակած իր արծուի թևերը աստղ ստանալու էր փորձում՝ տալով սահմանադիր կօնդակ: Ի՞նչ պատասխանեցիք. գովեցիք և ուրիշ ոչինչ: Պարոններ, միթէ այդպէս շատ էք մտածում աստղերով: Պէտք չէ յաւակնութիւն ունենալ, որ մենք մի մեծ գործ ենք կատարում. եթէ մեր կատարած գործը իրօք մեծ լինէր՝ գենէրալ-նահանգապետ Եաշկէվիչը չէր շտապի հեռագրով շնորհաւորել մեր ձեռնարկութիւնը. նա շատ լաւ է հասկացել այն սկզբունքը, որ պէտք է բաժանել՝ հեշտութեամբ տիրելու համար:

«Գալիս եմ, պարոններ, այժմ պարզելու, թէ ինչ կարող ենք մենք անել: Մենք պիտի աշխատենք. ա. մտցնել մեր դպրոցների, կալուածների և հոգևոր-վարչական կառավարութեան մէջ կատարեալ ռամկավար հոգի. չէզոքացնել մեր հոգևորականութեան կամայական հոգին՝ սահմանելով վարչական բոլոր ինստանցիաներում խորհուրդներ՝ ժողովրդական ընտրւթ. ներկայացուցիչներից բաղկացած. բ. մշակել ապագայի համար ընտրական ծրագիր. գ. քննել և լրացնել հրատարակված ծխական կանոնադրութիւնը. դ. քննել և հաստատել դպրոցական ծրագիրն ու կանոնադրութիւնը, որ մասնագէտ ոյժեր մշակել են, և տալ իբրև փորձ միամեայ գործածութեան համար. ե. և որ գլխաւորն է միջոցներ գտնել ժողովրդին վերահաս սովից ազատելու համար. հոգևորականներին դեռ և ասպարէզից քշելու ժամանակը չէ. այլ պէտք է նրանց պարտաւորեցնել ցուպը ձեռներին շրջել գիւղէ-գիւղ, քաղաքէ-քաղաք քարոզելու, յորդորելու, պահանջելու և մինչև իսկ մուրալու, ոչ իրանց անձի, այլ ժողովրդի համար:

«Եթէ այսքանն անենք՝ ժողովուրդը մեզնից գոհ կը լինի և մեր պատգամաւորական ժողովը իր կոչումը հասկացած կը լինի և խուսափած ժողովրդի բոյկոտից: Ապա թէ ոչ կը նմանվենք այն մարդուն, որ դժգոհ լինելով իր աղքատիկ խրճիթից՝ ցանկանում է լինել պալատ. քանդում է իր խրճիթը և յետոյ է միայն տեսնում, որ իր դրամը բաւական չէ իր երևակայած պալատը կառուցանելու. հետևանքը այն է լինում, որ զրկվում է նաև աղքատիկ խրճիթից»:

Լ. Աթաբէգեան (Դիզակի պատգամաւոր) շեշտում է, որ ինքն և իր ընկերները այստեղ չեն եկել նոր պետեր, նոր Վեհափառներ ստեղծելու տրամադրութեամբ (ակնարկ սեղանատան մէջ պատահած դէպքի վրա). Գալով այն հարցին, թէ ժողովը սահմանադիր է արդեօք, նա գտնում է, որ սահմանադիր պէտք է կոչվեն այն ժողովները, որոնք նոր հիմնարկութիւններ ստեղծելու իրաւունքն ունեն: «Այդ տեսակէտից ներկայ ժողովը սահմանադիր է միայն կուլտուրական հիմնարկութիւնների վերաբերմամբ, սակայն մենք գիտակցում ենք, որ մեր սահմանը վերջանում է այնտեղ, ուր սկսվում են ռուս կառավարութեան սահմանները. այդտեղ մենք գուցէ հանդիպենք սուինների և գնդացիրների, ուստի պէտք է պատրաստ լինենք ասելու «յետ քաշվեցէք» և պիտի կարողանանք լայնացնել այդ սահմանները»: Անցնելով այն հարցին, թէ որքան օրինաւոր և գիտակցական են եղել ներկայ ընտրութիւնները, նա ակնարկում է մշակականների ձեռքով կատարված հին ընտրութիւնները, որոնք այժմեանից աւելի շատ անկատար ձևով էին կատարվում և ասում է, որ եթէ այժմ այս ժողովը իսկական ներկայացուցչութիւն չեն համարում, որովհետև այստեղ տեսնում են բոլորովին նոր մարդկանց, և չեն բազմած նրանք, որ միշտ սովոր էին համարել իրանց պատգամաւորներ: Բերելով ապա օրինակներ ուրիշ երկիրների ընտրութիւններից, թէ այնտեղ ևս ժողովրդի 1/100-րդ մասը հազիւ մասնակցում է ընտրութիւններին, խոստովանելով, որ ներկայ ժողովը ունի շատ թերութիւններ, դեմօկրատական հիմունքների վրա չէ ընտրված և ոչ էլ քառանդամ սիստեմով, հերքելով Հ. Առաքելեանի ակնարկը կանանց ոչ-մասնակցութեան մասին, նա եզրակացնում է, որ ժողովը օրինաւոր է և սահմանադիր: Դրանից յետոյ երկար կանգ է առնում, թէ ինչու ժողովուրդը իր քուէն տուեց դաշնակցականներին, որովհետև ամենից հայ ժողովրդի մէջ, ինչ որ զօրեղ, խելացի, եռանդուն է, համախմբվել է Դաշնակցութեան դրօշակի տակ: Ներկայ ժողովի ամբողջ գործունէութեան իմաստը պէտք է լինի գաւառական կազմակերպութիւններ ստեղծել և ձգտել ֆեդերատիվ սկզբունքներով իրար հետ շաղկապելու այդ կազմակերպութիւնները:»

Հ. Առաքելեան

(Կը շարունակվի)

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅ ԿԵԱՆՔԻՆ

—

Կահիրէ, 25 օգոստոսի

Արևմտեան հայոց արտասահմանի ոչ-կուսակցական մամուլը, հիմա ընդհանուր քաղաքական խնդիրներու մէջ, «Մշակ»-ին ուղղութիւնը կը յանձնարարէ հայ ժողովրդին: Մէկ մէկու գլխովին հակառակող հրատարակութիւններն իսկ, որպիսիք են՝ «Անահիտ» ու «Շիրակ», անոր «մշակականութեան» մէջ կուգան կը համաձայնին:—Համերաշխական ձգտում մը, դիտել կուտար չափաւորական մը, որ կը հաւատէ, թէ դեւերը մինակ ի կորուստ մարդկան չէ որ կը միաբանին, այլ երբեմն ի փրկութիւն ալ:

«Կոմպլիմենտ»-ը թէև մամուլին ներկայացուցիչներուն անձնասիրութիւնը չափազանցօրէն չգգուէ իսկ, բայց և այնպէս ճշմարտութիւն մը կարտացոլէ. «չափաւորութեան» գաղափարը հայ մտքերուն վրայ տիրապետել կը սկսի:

Սկսեալ 1896-էն, արտասահման գտնուող հայերը, որոնք ստուարթիւ բազմացած են տարագրութեանց երեսէն, քաղաքական ուղղութեան մէջ երեք գլխաւոր բաժանում ներկայացուցած են. ծայրայեղ, չափաւոր, չէզոք: Առաջինները կարծես կը ներշնչուէին՝ «բռէ ընկէրդ, թող պատահի պատահելիքը» նշանաբանէն: Խօսիլ ու գործել առանց աջ ու ձախ նայելու, առանց ետև առջև նայելու՝ ահա իրենց գործունէութեան ամբողջ ծրագիրը: «Չէզոքները» ուրիշ բան չէին ըրած բայց եթէ լալ, ողբալ, հայհոյել, անիծել: Իրենց համոզմամբը, ազգին գլուխն եկած ու գալիք ամեն դժբաղդութիւն, ամեն աղէտաւորութիւն այդ ծայրայեղներուն «անխոհեմութեանը» բնական, անխուսափելի հետևանքն է, և հետևանքը պիտի ըլլայ միշտ: Բայց եթէ ասոնք յիշէին մեծ պետութեանց 1880 սեպտեմբեր 7 թուակիր առ Բ. Դուռն ծանուցագիրը, որուն արտակարգ կարևորութիւնը ամեն հայ պիտի ըմբռնէ, զայն կարդալով պ Հ. Առաքելեանին «Մի ամիս Արևելքում» հատորին մէջ, պիտի անդրադառնային, թէ արդէն քառորդ դար մը առաջ ալ պետութիւնները կը նախատեսէին Թիւրքիոյ հայոց անզգալաբար ջնջումն ու անհետացումը, եթէ Թիւրքիոյ վարչական կազմակերպութիւնը Հայաստանի մէջ հիմնական բարեփոխումներ չկրէր: Հայաբնակ գաւառներու մէջ իրաց վիճակին շարունակութիւնը «առաջ կը բերէր, ըստ ամենայն հաւանականութեան, քրիստոնեայ ազգաբնակութեան ջնջումն ընդարձակ նահանգներու մէջ»: Պարզ չէ: Բայց վերջապէս, ծայրայեղները բան մը չյաջողեցուցին որ այդ «իրաց վիճակը» փոփոխէր: Եւ ոչ ալ չէզոքները իրենց լալիքներովը արիւնահոսումը դադրեցնել յաջողեցան:

Ծայրայեղներուն ու չէզոքներուն միջև «չափաւորականները» երևցան, որոնք ոչ տաք գլուխ գործունէութեան մէջ կը փնտռէին Հայաստանի բարեկարգման յոյսը, ոչ ալ լալկան անգործունէութեան մէջ: Ստեղծուած կացութիւն մը քննելով և ուսումնասիրելով այն եզրակացութեան հասած էին, թէ Հայաստան ապստամբական լուրջ շարժում մը առաջ բերել մարդկօրէն անհնարին է: Պզտիկ կամ մեծ պայթում մը երբեք վստահութիւն չի տար մեծ պետութիւններու կողմէն օգնութեան ժամանումի, քանի որ Գերմանիան Թիւրքիան կը պաշտպանէ: Հետևաբար, հայոց կողմէն Թիւրքիոյ կառավարութեան կոտորածներուն առիթ մը, պատրուակ մը իսկ պէտք չէ հայթայթել: Հայաստանի ժողովրդին գոնէ քիչ մը հանգիստ շունչ առնել տալու համար պէտք չէ խրտչիլ նոյն իսկ խաղաղասիրական կարգադրութեանց ընծայելիք առաւելութիւններէն ու երբեք չընել բան մը, գործը մը որ Եւրոպայի հանրային կարծիքը մեզի աննպաստ տրամադրելու կրնայ ծառայել: Ռուսահայոց հետ իրենց վերաբերութեանց մէջ ծրագրած էին՝ Թիւրքիոյ հայոց գործերը Ռուսիոյ հայոց գերագոյն վարդապետութեանը չենթարկել և ռուսահայոց ներքին գործերուն ոչ միջամտել, ոչ ալ անոնցմով շատ զբաղիլ: «Չափաւորականութեան» գլխաւոր թերթը «Նոր Կեանք»-ը եղաւ, որ 1898 յունուար 1-էն մինչև 1901 մայիս շարունակեց միևնոյն ուղղութեամբ ու ոգւով, դաւադրանքի մը զոհ երթալով, շուտ մը դադրեցաւ: Արդ, «Նոր Կեանք»-ը որ ամեն խաւերու մէջ տարածուած ուժ մըն էր, «Նոր Կեանք»-ը ընդհանուր քաղաքականութեան մէջ «մշակական» էր, ու իր ժողովրդականացման գլխաւոր պատճառներէն մէկը այդ ուղղութեան մէջ փնտռելու է:

Այդ ժամանակները սակայն, արտասահմանի հայոց մէջ գաղափար մը տարածուիլ սկսաւ, թէ «Մշակ», պ. Քալանթարի խմբագրութեամբը, քաղաքական որոշ կուսակցութեան մը կը յարի: Այս կարծիքը, կամ թէ ամբաստանութիւնը, մամուլին մէջ ալ արձագանգ գտնել սկսաւ, մանաւանդ Վառնայի «Իրաւունք»-ին միջոցաւ, որ այն ատեն «Նոր Կեանք»-ին հետ համերաշխ ընթացող կարևոր թերթերէն մէկն էր: «Նոր Կեանք» ընդարձակ յօդուածով մը «Մշակ»-ին պ. Քալանթարի ուղղութիւնը բացատրեց, ցոյց տալով, թէ անհիմն կարծիք մըն է «Մշակ»-ը և իր խմբագիրը ո և է կուսակցութեան յարած համարել: Ընդհանրութիւնը այս ճշմարտութեան շուտով համոզուեցաւ «Նոր Կեանք»-ին մարտնչումները հանրածանօթ ըլլալով:

Ժամանակը առաջ գնաց. քանի մը տարուան մէջ Ռուսիա հիմնական փոփոխութիւններ կրելու վիճակին հասաւ. ասդին Թիւրքիոյ հայերն ալ շատ բան սորվեցան. մտքերը օրէ օր դէպի «չափաւորութիւն» կը հակին: Ակներև կը տեսնուի, որ թէ Հայաստան, թէ արտասահման ինքնամփոփ նոր ուղղութեան մը խորհուրդները մարմին առնել կը սկսին: Մեր վերածնունդի գործին մէջ Ռուսիոյ հայոց հետ համերաշխ ընթանալ փափագելով հանդերձ, հաւանօրէն պիտի չթոյլատրուի որ մեր ճակատագիրը անոնց գերագոյն հրամանատարութեանը յանձնենք. վերջին տասը տարուան փորձառութիւնը աւելի զգուշաւորութիւն կը թելադրէ: Ահա ինչու համար աչքերնիս կամաց-կամաց նորէն «Մշակ»-ին կը վերադառնան, որ արդի կացութեան թոյլատրած ազատութեան սահմաններուն մէջ պիտի կարենայ Ռուսիոյ և Թիւրքիոյ հայոց միջև համերաշխութեան և գործնական կեդրոնը հանդիսանալ:

Առ այժմ հոս մնանք:

—

Եգիպտական փոխադարձ աջակցութիւնը անտարակոյս մեզի բաւական դիւրութեամբ իրարու կը կապէ և համերաշխութիւնը կամրապնդէ: Քառորդ դար մը առաջ ի նպաստ Արարատեան ընկերութեան, ի նպաստ Հայաստանի սովելոց ձեր աջակցութիւնը չէ՞ր որ համակրանքի հոսանք մը ստեղծեց Արարատէն ասդին ու անդին, Պօլսէն Թիֆլիս: Դժբաղդաբար, երբ Կովկաս աղէտաւոր վիճակի մէջ է, Թիւրքիոյ հայութիւնն ալ բարեբաստիկ կացութեան մը մէջ չէ որպէս զի սրտէն որքան կը բղխի ձեռքէն ալ այնքան ելլէ: Գիտէք թէ ինչ վիճակի մէջ ենք: Արտասահմանի հայութիւնն է որ ամենուն պէտք է հասնի, Թիւրքիոյ հայոց ալ, Ռուսիոյ հայոց ալ: Ու որքան պարտականութիւններ այդ հայութեան վրայ:

Եգիպտաբնակ հայոց մէջ ցաւակցութեան զօրաւոր զգացում մը կը տիրէ դէպի Ռուսիոյ հայերը: Տարի մըն է որ հանգանակութիւններ կը կատարուին, յատկապէս երիտասարդութեան աշխատութիւններովը որոնց արդիւնքը պարբերաբար ձեզի կը հասնին:

Գայթակղութիւն մը սակայն այս օրերս երևան ելաւ. Թերթ մը ի նպաստ Կովկասի իր հանգանակած դրամը տարի մըն է տեղ չէ խրկած: Փորձը Լուսաբեր երևան հանեց: Խայտառակութիւնը շատ մեծ եղաւ, և դայրոյթը ընդհանուր է: Կարծեմ թէ փութային ճարճարանք ընել և խրկել: Այս առթիւ եղած հրատարակութիւնները բնորոշ են, և կարժէ որ ուշադիր կարդաք:

Ու յայտնութիւններէն երևան եկաւ որ միևնոյն մարդիկը Զէյթունի բարեխնամ ընկերութեան դրամն ալ «վասն ի վերուստ» ըրած են:

Այս իրողութեանց վրայ կը շեշտեմ, վասն զի այդ թերթը, իր ամերիկեան պաշտօնակցին հետ մէկ ջուխտակ եղած, երբ յեղափոխութեան ախոյեաններ, ջանացին աս ու ան անպատուել, և մանաւանդ իրենց յարձակումները «Մշակ»-ի և անոր խմբագրին դէմ կատարուեցան...

Բայց, անբարեխղճութեան այդ բացառիկ նմոյշը ապացոյց մը չէ՞ թէ, ընդհանուր կերպով, հանգանակութիւնները և անոնց առաքումը խղճմտօրէն կը կատարուին:

Այս տխուր միջադէպը անշուշտ պիտի մոռցուի այն հանգանակութեամբը, որ Աղեքսանդրիա կը կատարուի այժմ և որուն արդիւնքը կը յուսացուի, ի մասնաւորապէս տասը հազար—10,000—ռուբլիի յանգելով վաղընդփոյթ Կովկաս խրկուիլ:

Հանգանակութեան գլուխը անցած է Բարթող փաշա, որ անցեալ տարի այս ատեններս հինգ հազար ռուբլիի չափ գումար մը Կովկաս հասցուց:

Փաշային ազգային արկածները «Մշակ»-ին մէջ գրած եմ: Բարթող փաշան ատենապետն էր այն թաղային խնամակալութեան զոր Աղեքսանդրիոյ ժողովուրդը քանի մը ամիս առաջ տապալեց: Փաշան ալ շատ նախատեցին, շատ թշնամանեցին. մինչև իսկ խորտակեցին, կոտրտեցին մարմարեայ յիշատակարանը որուն վրայ արձանագրուած էր փաշային մէկ նուիրատուութիւնը եկեղեցիին: Բայց մարդը, փոխանակ «նալէթ» ընելով մէկդի քաշուելու, հրապարակին վրայ դէմառդէմ իր հակառակորդներուն կը մնայ: Անոնց տկարութիւնը և իր զօրութիւնը ցոյց տալու համար շատ նպատակայարմար քաղաքականութիւն մըն է Կովկասի արկածեալց հանգանակութիւնը: Ժողովուրդը «գնէ փաշա, գնէ փաշա, ան չըլլայ նէ բան մը ըլլալիք չունի» կըսէ: Ու կը կարծուի, որ փաշան ժողովրդին քուէովը նորէն գործի գլուխ անցնի, երբ ընտրութիւններ կատարուին: Կ'երևի թէ Աղեքսանդրիոյ «երեսփոխանական» ընտրութիւնները ջուրը պիտի իյնան. գլխաւորապէս, պատրիարքարանին օրինական դիմադրութեամբ:

Բայց այս խնդրին վրայ խօսելու դեռ շատ ատեն կայ, մինչև Պօղոս փաշային Եւրոպայէն վերադարձը: Դէպքը սակայն ինքնին բաւական յատկանշական է:

Քանի մը տարիէ ի վեր, պատրիարքարանէն նշանակուած խնամակալութիւն մը կը վարէր Աղեքսանդրիոյ ազգային գործերը, մինչ, ըստ սահմանադրութեան, վարիչները ժողովրդին քուէովը պիտի ընտրուէին, իբրև թաղական խորհուրդ: Երկարատև կռիւներէ յետոյ, խնամակալութիւնը այս տարի Նոր Կիրակիին ժողովրդական յուզմամբ տապալեցաւ: Ժողովուրդը տեղական կառավարութեան միջոցաւ կատարեալ ազատութիւն ունեցաւ «օրէնքը» գործադրել տալ: Բայց, փոխանակ թաղական խորհուրդի մը, ազգաբնակիչները երեսփոխանութիւն մը ընտրելու ելան: Եւ ընտրուողներն ալ իրարու հետ անհամաձայնութեամբ կէս առ կէս հրաժարեցան: Միևնոյն ատեն, պատրիարքարանն ալ այս ընտրութիւնը չվաւերացուց, իբր հակասահմանադրական գործ: Պատրիարքարանին մերժմամբը, բնականաբար առաջնորդը չէր կրնար նորընտիր մարմինը տեղական իշխանութեան պաշտօնապէս ճանչցնել տալ: Կառավարութիւնն ալ առաջնորդարան հրահանգ խրկեց արդի կացութիւնը չփոխել մինչև Պօղոս փաշա Նուպարին Եւրոպայէն վերադարձը:

Շատ պզտիկ մնացին անոնք, որ եգիպտական կառավարութեան «արդարակորով օրինասիրութիւնը» մինչև եօթներորդ երկինքը բարձրացուցին, երբ կը կարծէին թէ միջամտութիւնը հակախնամակալական ձգտումով տեղի կունենայ:

Հիմա դարձեալ օրէնք, սահմանադրութիւն, ժողովրդական իրաւունք, ամեն ինչ անհատի մը բերնէն կախուած ունի: Պօղոս փաշան ինչ որ ըսէ, կառավարութիւնն ալ զայն գործադրել պիտի տայ:

Եգիպտոս ալ միշտ Արևելք է: Տիրապետողը՝ անհատն է միշտ:

—

Վերադառնանք Կովկասին: Եկեղեցական խնդիրները որ ձեր կողմերը կը յուզուին, հոս ժողովուրդը շատ կը շահագրգռեն, ու «Լուսաբեր» ըստ բաւականին տեղեկութիւններ կը հաղորդէ, առաջնորդուելով «Մշակ»-էն:

Էջմիածնի կեդրոնական ժողովի մը գումարման խնդիրը ուշադրութենէ անշուշտ չէր կրնար վրիպիլ: Ծանուցանելով տասնչորս եկեղեցականներու բողոքարկութիւնը, «Լուսաբեր»-ին մէջ, կարծիք կը յայտնուէր, թէ կաթողիկոսական ընտրութեան համար աշխարհական պատգամաւորներ կընտրուին բայց ոչ եկեղեցականներ, վասն զի ամեն թեմական առաջնորդ ըստ օրէնքի ինքնին ընտրող մըն է, ուստի կարելի է, որ ներկայ պարագաներուն մէջ ալ այդպիսի իրաւունք մը մտաբերուի: Քանի որ կեդրոնական ժողովին եկեղեցականներուն մասնակցութեան խնդիրը ձեզի կը շահագրգռէ, յիշեցնեմ Պօլսոյ պայքարները Սահմանադրութեան թուականին:

Մեր արդի Սահմանադրութեամբ Ազգային Ժողովը կը բաղկանայ 140 անդամէ, որոնց քսանը եկեղեցական են ու Պօլսոյ եկեղեցականներուն համագումարէն ընտրուած: Բայց Սահմանադրութեան հիմնադիրները չէին ուզած խտրանք դնել եկեղեցականի ու աշխարհականի միջև. ժողովուրդը իր երեսփոխանները պիտի ընտրէր, իր քուէն կուզէր եկեղեցականին կուտար, կուզէր աշխարհականին: Սակայն, ինչ որ հիմա Էջմիածին կը պատահի, յար և նման տեսարան մը կէս դար առաջ Պօլիս երևան կուգար: Տարբերութեամբ մը. Պարգևանց արքեպիսկոպոսի մը տեղ՝ Ստեփանոս պատուելի մը: Այդ թուին [illegible] ծարանն էր, որ իրեն կռնակ ունենալով արքունի ճարտարապետ Պալեան Կարապետ ամիրան՝ ամենամեծ խոչընդոտներ կը հանէր Սահմանադրութեան հաստատմանը դէմ: Համաձայնութեան մը յանգելու համար, խորհուրդի խառն դրութիւնը ընդունուեցաւ, որ բաւական վնասակար եղաւ նոյն իսկ եկեղեցականներուն, վասն զի շատ հաւանական է, որ թուով քսանէն աւելի եկեղեցականներ Ազգային Ժողովին մէջ աթոռ պիտի ունենային, եթէ ժողովուրդը իր քուէն ազատօրէն

—

Բայց այս կարգի մտածմունքներէն պահ մը կը սթափինք: Սուլթանին ծանր հիւանդութեան լուրը մեզի ցնցեց. կարծեցինք որ օրուան վաղուան է: Նորագոյն լուրերը սուլթան Համիդը «առողջացած» կը հաւաստեն, բայց ընդհանուր կարծիքը այն է, թէ առողջութիւնն ալ անցողական է. Պօլսէն ստացուած նամակները կը զրուցեն, թէ քանի մը ամսէն Թիւրքիան նոր գահակալ մը կունենայ: Բայց եթէ, յաջորդութեան օրինական կարգը խանգարուելով, փոխանակ՝ սուլթանական ընտանիքին երիցագոյն անդամին, որ սուլթան Համիդին եղբայրը՝ Րէշատ էֆէնդին է, պետական հարուածով մը Համիդին մէկ որդին գահը յաջորդէ, այն ատեն Թիւրքիոյ ապագայ վիճակը, քան հիմակուանը շատ աւելի կը ծանրանայ: Ներքին յեղափոխութիւնը Թիւրքերուն մէջ ալ կը սկսի:

Իսկ մենք կարծեմ թէ ոչ մէկէն ոչ միւսէն մեծկակ բան մը ակնկալելու ենք, բանտարկեալներ կրնան արձակուիլ ու երթևեկութեանց դիւրութիւններ կրնան տրուիլ [illegible] մարդ, բայց Թիւրքիան միշտ Թիւրքիա կը մնայ:

* * *

ՇԱՐԺՈՒՄՆԵՐ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

«Нов. Путь» լրագիրը տեղեկութիւն է ստացել, որ ագրարական անկարգութիւնները հետզհետէ սաստկանում են Սարատովի և Կազանի նահանգներում գլխաւորապէս այն տեղերում, ուր սովը ծայրայեղ սուր արտայայտութիւն է ստանում. Սարատովի նահանգում կալուածական դաստակերտները կատարեալ ամրացված զօրանոցի կերպարանք են ստացել, բայց և այնպէս դա չէ կարողանում արգելք լինել հրդեհածգութիւններին և ամենայն օր նորանոր դաստակերտներ են բոցավառվում: Կազանի նահանգում համարեա բոլոր կալուածական դաստակերտները դատարկված են. տէրերը ապրում են քաղաքներում, թողնելով իրանց ստացուածքն ու կալուածքը սովեալների տնօրինութեան:

—Բանւորների կռիւը, իրանց տնտեսական վիճակի բարելաւութեան համար, մեծ անհանգստութիւն ու սարսափ է առաջացրել գործարանատէրերի և ֆաբրիկանտների մէջ: Արդիւնաբերողները կազմակերպվում են և մշակում են մի ամբողջ ծրագիր բանւորների պահանջներին դիմադրելու համար: «Սև ցուցակներ» կազմել և մերժել նրանց ծառայութեան ընդունելու—ահա այն միջոցը, որը մտադիր է ամենալայն չափերով ու յամառ կերպով գործադրել աշխատանքի դէմ կազմակերպված կապիտալը: Աշխատանքի վիճակը այդ կռւում սաստիկ բարդացել է ներկայումս, նրանով մանաւանդ, որ ներկայ քաղաքական րեժիմը իրապէս ոչ մի հնարաւորութիւն չէ տալիս բանւորներին ապրել ու գործել կազմակերպված. արհեստակցական միութիւնները, որ հազիւ են սկսել կեանք ստանալ, երկրորդ անգամ ենթարկվեցին ոստիկանական ռեպրեսսիաների և մասամբ էլ լիակատար ոչնչացման: Սոցիալական շահերի մաքառումը այդպիսով վերստին դրվում է անհաւասար, ապա ուրեմն և, անբնական պայմանների մէջ. և հարկաւոր չէ մարգարէ լինել գուշակելու համար, որ այդ հողի վրա հնարաւոր է նոր ծանր բարդութիւններ:

—Սամարայից «Своб. Ж.» լրագրին հաղորդում են, որ Սամարայի նահանգի Պետրովսկ և Բլագոդարնի գիւղերում դրութիւնը շատ խառն է: Նրանցից առաջինում գիւղացիները պետական պաշտօնեաներին հեռացրել են պաշտօնից և նրանց փոխարէն նշանակել առանձին կոմիտէ: Բլագոդարնում հեռացրել են պաշտօնեաներին, կալանաւորել են խապաճիկին, կնքել են գանձարանը և գրասենեակը: Կոզակներ են ուղարկված: Նոր նահանգապետ է նշանակվել Լիտվինովը:

ԱՆԿԵՂԾ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

(Վերջ)

Ամբողջ Եւրոպայում և Ռուսաստանում կա՞յ արդեօք մի քաղաքական կուսակցութիւն, որը իր յատուկ զինւորներն ու ոստիկանութիւնը ունենայ: Թող երբէք չը փորձեն մեզ օրինակ բերելու Մակեդոնիայում և Կրետէյում գործող բուլղարական չէտաներն ու յունական հայդուկները, որովհետև դրանք գոյութիւն և raison dêtre ունեն միշտ թրքական սահմանների մէջ եղած ժամանակ միայն, իսկ նրանից դուրս նրանք իսկոյն դադարում են «զինւոր» անունը կրելուց և երբէք իրանց կուսակցութիւնների կողմից չեն գործադրվում Բուլղարիայի կամ Յունաստանի ներքին քաղաքական և հասարակական խնդիրների մէջ: Բացի դրանից, մակեդոնական ու յունական յեղափոխական կուսակցութիւնները երբեք յաւակնութիւն չունեն իրանց սոցիալիստական անունը, ինչպիսին ունի Դաշնակցութիւնը: Իսկ իսկական սոցիալիստական կուսակցութիւններից և ոչ մէկը զինւորներ չէ պահում ու միլիտարիզմի կողմնակից չէ:

Կա՞յ արդեօք մի քաղաքական և մանաւանդ սոցիալիստական կուսակցութիւն, որը իր դատարանները, դատաստանական մեքենան, ջալլատը, բանտերը և այլն ունենայ: Ճիշտ է, այո, յեղափոխական ընկերային կուսակցութիւնների անդամները, երբ նրանց մէջ մի որևէ թիւրիմացութիւն կամ վէճ է ծագում, իրանց կօնսպերատիվ գործերը երևան չը հանելու համար, երբեք պետական դատարաններին չեն դիմում, այլ ամեն ինչ վերջացնում են ընկերական դատարանով, բայց այդ դատարանը բոլորովին այն չէ, ինչ որ սահմել են դաշնակցականները, և նրանք չեն զբաղվում կուսակցութեան չը պատկանող մարդկանց գործերով և մանաւանդ չեն զբաղվում ոչ քրէական, ոչ քաղաքացիական և ոչ էլ ամուսնական բարդ ու կնճռոտ խնդիրներով, ինչպէս որ այդ անում են Դաշնակցութեան դատարանները:

Կա՞յ արդեօք երկրագնդի մի որևէ անկիւնում այնպիսի յեղափոխական կուսակցութիւն, որը իր անդամների թիւը բազմացնելու համար այնպիսի միջոցների ու եղանակների դիմէր, ինչպէս արել և անում է Դաշնակցութիւնը, այն է, զինւորներով մանել գիւղերը, նոյն իսկ ամբողջ գաւառը, հաւաքել ժողովրդին եկեղեցու բակը կամ գիւղի հրապարակը, կուսակցութեան «դաֆթարի» մէջ արձանագրել բոլոր գիւղացիների անունները՝ ծերերից սկսած մինչև մանուկը, և ապա յայտարարել, թէ այդ գիւղը, այդ շրջանի կամ գաւառի բոլոր գիւղերը դաշնակցականներ են, կամ աւելի ճիշտ է ասել՝ Դաշնակցութեան հպատակ սեփականութիւնն են, ուստի և այլ կուսակցութիւնների կամ կողմնակի մարդկանց համար այդ գիւղերում մուտքը արգելված է:

Պատմեցէք այս այլանդակ քրդական սիստեմը մի ռուս կամ եւրոպայի յեղափոխականի և կամ թէ մի պարզ կուլտուրական մարդու, և նա ձեզ չի հաւատայ, աչքերը չռած ձեզ կը նայի, ենթադրելով, թէ դուք կամ առասպելներ էք պատմում և կամ թէ միջնադարեան ասպետների տերրիտորիաներ գրաւելու մասին էք խօսում: Մինչդեռ այդ սիստեմը մեր կեանքի մէջ մի կատարեալ իրականութիւն է և դրա հեղինակներն ու պաշտպանները համալսարանաւարտ դաշնակցականներն են, որոնք, երևի, նախանձելով Մակուի խանի փառքին, կամեցել են իրանց համար էլ մի տերրիտորիա և խանութիւն ստեղծել:

Կա՞յ արդեօք մի որևէ քաղաքական կուսակցութիւն, որի անդամները այն աստիճան սարսափ ու վախ զգան իրանց հակառակ կուսակցութիւնների խօսքի և մամուլի ազատութիւնից, որ ամենակատաղի հալածանք սկսեն նրանց դէմ և հալածանք ոչ թէ խօսքով, այլ գործով, որը հասցրած լինի ամենաբիրտ, սրիկայական, մինչև իսկ ոճրագործութեան աստիճանի:

Ճիշտ է, այո, թէ Եւրոպայում և թէ մանաւանդ Ռուսաստանում, միմեանց հակառակ քաղաքական կուսակցութիւնները երբեմն այն աստիճան սուր կերպով են լարվում միմեանց դէմ, որ կատարեալ թշնամական դիրք են ընդունում միմեանց հանդէպ, սակայն երբեք տեսնված ու լսված չէ, որ նրանց հակառակութիւններն ու կռիւները մամուլի էջերից և հանրային ամբիոններից այն կողմ անցնեն:

Ե՞րբ է տեսնված, օրինակի համար, որ դիցուք, սոց.-յեղափոխականները կամ սոց.-դեմոկրատները բոյկոտ յայտարարեն իրանց հակառակորդ կուսակցութեան մամուլի դէմ և ամեն տեսակ անխիղճ միջոցներ գործ դնեն նրա տարածվելուն խանգարելու, ինչպէս որ այդ անում է Դաշնակցութիւնը:

Ե՞րբ է տեսնված, որ մի քաղաքական կուսակցութիւն ամենախայտառակ հալածանքի ենթարկի իր հակառակորդ կուսակցութեան պրօպագանդիստներին, թոյլ չը տալով նրանց մանել այս կամ այն շրջանի մէջ, ասելով թէ՝ «այդ մեր րայօնն է», մեր տերրիտորիան է, ինչպէս որ առանց քաշվելու այդ անում է Դաշնակցութիւնը:

Ե՞րբ է տեսնված, վերջապէս, որ մի որևէ քաղաքական կուսակցութիւն այն աստիճանի հասցնի իր թշնամանքը դէպի հակառակ կուսակցութիւնը, որ նրա անդամներին տեռրօրի ենթարկի ու [illegible] սպանի, ինչպէս առանց խղճահարվելու ու խղճի խայթոց զգալու՝ այդ անում է Դաշնակցութիւնը:

Այս բոլոր կանոնաւոր սիստեմի վերածված այլանդակ գործողութիւնները հրապարակի վրա լինելուց յետոյ, մենք զարմանում ենք, թէ ինչպէս մարդիկ կարող են օտար ազգերի և օտար երկրների կուսակցութիւնների անունից խօսել ու դրանց հետ համեմատել ներկայ Դաշնակցութիւնը: Արդեօք այդ մարդիկը կատարեալ տգէտների տեղ են դնում հայ հասարակութիւնը, եթէ ոչ՝ իրանց համար շատ ձեռնտու է այդպիսի տգէտներ ձևանալը: Ի՞նչպէս կարող է «բացառութիւն» և «բացառիկ» դէպքեր անուանել այն բոլոր հրէշային խայտառակութիւններն ու ոճրագործութիւնները, որոնք մի կատարեալ սիստեմի են վերածված և գործադրվում են ամբողջ տարիների ընթացքում:

Ճիշտ է, այո, բացառիկ և դատապարտելի դէպքեր պատահում են և եւրոպական ամենակատարեալ կուսակցութիւնների մէջ էլ, սակայն այդպիսի բացառիկ դէպքերը հրապարակ հանողը ու նրանց ամենախիստ քննադատութեան ենթարկողը ու դատապարտողը հէնց այն կուսակցութիւնն է լինում, որի մէջ կատարված է լինում դատապարտելի դէպքը: Իսկ Դաշնակցութիւնը երբ և իցէ հրապարակ հանե՞լ է իր կուսակցութեան մէջ կատարված «բացառիկ» այլանդակութիւնները: Պատահե՞լ է երբ և իցէ, որ «Յառաջ-Ալիք-Զանգը» գէթ մի անգամ մերկացնէին իրանց կուսակցութեան ար-կաններին ու ոճրագործներին: Դաշնակցութիւնը ոչ միայն չէ մերկացնում իր «բացառիկ պակասութիւնները», այլև ընդհակառակը, նա ամենայն խնամքով ծածկում է նրանց և խիստ հալածանքի է ենթարկում մերկացողներին: Աւելին ևս, ինչպէս դաշնակցական ղեկավար պարոնը (Զ.) ամենայն անկեղծութեամբ յայտնեց այն երեկոյ, Դաշնակցութիւնը դիտմամբ իր շարքերի մէջ է ընդունում ամենայայտնի սրիկաներին ու աւազակներին, «որպէս զի նրանք աւելի անվտանգ լինեն հասարակութեան համար»: Այստեղ էլ դարձեալ ճիշտ և ճիշտ բիւրոկրատական տրամաբանութիւն. յայտնի աւազակին ոստիկանութեան մէջ պաշտօն տալ, որպէս զի նա հեշտութեամբ կարողանայ աւազակներին բռնել: Իսկ թէ ոստիկանի համազգեստը հագած աւազակը որչափ աւելի մեծ աւազակութիւններ կարող է անել, այդ մասին կարճամիտ բիւրոկրատը չէ կարող մտածել:

«Հին ուխտի» դաշնակցական ղեկավար պ. Զ.-ի արած անկեղծ խոստովանութիւններից ու ճիշտ մինիստրական բացատրութիւններից յետոյ, շատ բնորոշ ու հետաքրքիր էին «Նոր ուխտի» մի երիտասարդ դաշնակցականի խօսքերը: Սա ոչ միայն չը հերքեց Դաշնակցութեան դէմ արված ամբաստանութիւնները, ոչ միայն պ. Զ.-ի նման չաշխատեց արդարացնել Դաշնակցութիւնը, ամեն բանի մէջ խեղճ ու համր ժողովրդին մեղադրելով, այլ ընդհակառակը, շատ աւելի անկեղծ շեշտերով խոստովանեց Դաշնակցութեան բիւրոկրատիզմը իր ամբողջ այլանդակութեամբ, ասելով, որ այդ բոլորի պատճառը «Ալիք-Զանգի» խմբագրատան մէջ բազմած մի խումբ դիկտատորներն են, որոնք ամեն բան իրանց քմահաճոյքներին են ծառայեցնում: «Եւ հասարակութիւնը պէտք է անխնայ կռիւ յայտարարէ այդ դիկտատորների դէմ»: Այսպէս վերջացրեց իր խօսքը երիտասարդ դաշնակցականը:

Շատ սիրելի էր, ի հարկէ, մի երիտասարդ դաշնակցականի բերանից այդպիսի անկեղծ խոստովանութիւն և «դիկտատորների» դէմ բողոք լսելը: Ասում են նոյնիսկ, որ այդպիսի գիտակցութեան հասած «երիտասարդ» դաշնակցականների թիւը բաւական մեծ է այդ յեղափոխական անունը կրող աշխարհի մէջ, սակայն զարմանալի և անհասկանալի է մնում դարձեալ այն, թէ ինչո՞ւ այդ բողոքող և դժգոհ տարրերը, որոնք ցանկանում և պահանջում են, որ հասարակութիւնը կռիւ յայտարարէ իրանց դիկտատոր շէֆերի դէմ, իրանք՝ այդ դժգոհ ու բողոքող տարրերը երբէք ասպարէզ չեն դուրս գալիս ու հրապարակով թէ մամուլի մէջ և թէ մեծ ժողովներում, չեն մերկացնում իրանց շէֆերին ու չեն բողոքում նրանց կատարած բոլոր խայտառակութիւնների դէմ: Չէ՞ որ գիտակցութեան հասած դաշնակցականի մերկացումները շատ աւելի մեծ նշանակութիւն և արժէք կարող են ունենալ կուսակցական ֆանատիկոսութեամբ կուրացված դաշնակցական մասսաների համար, քան կողմնակի և Դաշնակցութեանը հակառակորդ ճանաչված անձնաւորութիւնների մերկացումները: Ցաւալին էլ հէնց այն է, որ միջնադարեան կաստայական ոգին այնչափ զօրաւոր է Դաշնակցութեան մէջ, որ նա կապում-կաշկանդում է նրա բոլոր դժգոհ ու բողոքող, թէկուզ «երիտասարդ» տարրերին էլ, որոնք ամօթ և անպատւութիւն են համարում իրանց կուսակցութեան այլանդակութիւնները մերկացնելը: Այլ կերպ ինչպէս բացատրել այդ «երիտասարդների» զգացական լռութիւնը այսպիսի մի ժամանակներում, երբ նրանց «դիկտատոր» շէֆերը իրանց կեղտոտ ձեռքերը արդէն մտցնում են ամեն մի հասարակական ու ժողովրդական գործերի մէջ և ամեն տեղ ապականութիւն և անբարոյականութիւն են տարածում:

Անկեղծ «երիտասարդ» դաշնակցականների համար իրանց «տրագիզմից» դուրս գալու երեք միջոց կայ.

1) Մնալ կուսակցութեան մէջ, իբրև մերկացնող և բողոքող տարր, և մամուլի ու խօսքի միջոցով սթափեցնել դաշնակցական խաւար մասսաները, դուրս կորզել նրանց շէֆերի ազդեցութիւնից և դնել կուսակցութիւնը նորից այն ուղիի վրա, որի վրա նա կանգնած է եղել իր գոյութեան օրից սկսած ամբողջ 16 տարվայ ընթացքում, այն է՝ տաճկահայերի ազատագրութեան գործը:

2) Բոլորովին երես դարձնել Դաշնակցութիւնից, դուրս գալ նրա շարքերից և մանել իւրաքանչիւր աշխարհահայեցողութիւններին համապատասխանող քաղաքական կուսակցութիւնների մէջ և դրանց հետ կռիւ մղել ամբողջ Դաշնակցութեան դէմ:

3) Յարմարվել դիկտատորների և ամբողջ կուսակցութեան բոլոր խայտառակութիւններին ու չարագործութիւններին և նրանց հետ մի ընդհանուր համերգ կազմել:

Ահա սրանք են տրագիզմից դուրս գալու երեք միջոցները:

Իսկ այն երիտասարդ դաշնակցականները, որոնք, ինչպէս պատմում են, ցանկանում են «մաքրել» Դաշնակցութիւնը նրա թէ անցեալ և թէ ներկայ կեղտերից, ցանկանում են նոյնիսկ փոփոխութեան ենթարկել նրա սկզբնական ծրագիրը և ազգայնական կուսակցութիւնից մի սոցիալիստական կուսակցութիւն դարձնել, պահելով հանդերձ նրա «Դաշնակցութիւն» հարլիկ-անունը, այդ կարգի դաշնակցական երիտասարդներին, ասում ենք, պարզապէս անիրագործելի ցնորքներով ապրողներ միայն կարող են համարվել, որոնք մինչև իսկ այն ամենահասարակ բանն անգամ չը գիտեն, որ նոր գինին երբէք չէ կարելի հին տիկերի մէջ լցնել, որովհետև կամ տիկը կը պայթի և կամ գինին կը փչանայ:

Խ.

«ԻՆՉ ՊԷՏՔ Է ԱՆԵՆՔ»

Այս վերնագրով «Իրշադ» թուրք լրագիրը զետեղել է իր էջերում մի յօդուած, զուտ պրօվօկատօրական բնոյթ կրող, որը և թարգմանաբար դնում ենք այստեղ ընթերցող հասարակութեան առաջ, դատելու թէ ինչ աստիճան «Իրշադ» լրագիրը ահագին քայլերով տանում է թէ իրան և թէ իւր մասսային դէպի անկումն, դէպի անվերջ խարխափում:

Ահա այդ յօդուածը.

«Վաղուց է, որ Նախիջևանի, Երևանի և Ղազախի գաւառներում հայերի ձեռքով սարքված թակարդը, ոստիկանութեան և զօրքի կատարած գործերը մեզ կարծել էին տալիս, որ դրանք կամաց-կամաց կանցնեն ու կը վերջանան:

«Մեզ թւում էր, որ հայ-թուրքական ընդհարումները միայն կառավարութեան պաշտօնեաների և վերջիններին ենթակայող տգէտ մասսայի գործ էին: Կարծում էինք, որ կառավարութեան պաշտօնեաների կողմից երևան բերված այդ աղէտը, երկու հին դրացիների միջև, անցողակի-ժամանակաւոր մի ցաւ էր, մի պատիժ:

«Սակայն որ աստիճան խաբվեցինք, անշնորհք և միաժամանակ հաւատացող գտնվեցինք, որ Ղարաբաղի և Երևանի շրջաններում հայերի ամեն տեսակ պատրաստութիւնները նկատելով, նրանց ապագայ չար դիտաւորութիւնները հասկանալով, ենթարկվեցինք նրանց խարդաւանքներին, և, մեզ կարևոր դէպքում պաշտպանելու համար, բնաւ չէինք ուզում մտածել: Այո, չէինք ուզում մտածել, որ վաղուց, շատ վաղուց հայ տղամարդկանց և կանանց գիշեր ու ցերեկ պատրաստած արիւնոտ դրամով, անթիւ և անհամար ռումբերը մեր տղաների, երեխաների և մեր գլխին պիտի պայթէին:

«Մեր մտքով անգամ չէր անցնում, որ ռուս զէնքերը, մեր յարգանքի ու հաւատարմութեան փոխարէն, հայերի հետ կարող էր միանալ և մեզ այդպէս անխիղճ կերպով կոտորել:

«Մեր այդօրինակ հաւատը և անկեղծութիւնն էին պատճառը, որ մեր մեծերը, փոքրերը, գրողները, աշխատաւորները, մի խօսքով ամենքը, միացած մեր դրացի հայերի հետ, անցեալի պէս համերաշխութեան ձեռք պարզեցինք, և այդպիսով մեր աչքերը կուրացնելով՝ մեզ համար մի վտանգաւոր և խախուտ ապագայ պատրաստեցինք:

«Եւ ահա այդ հաւատի առաջին հարուածը շատ պարզ կերպով երևան հանեց Ղարաբաղի դէպքը:

«Այժմ հարկաւոր է մեզ, որ դրանցից (հայերից) զգոյշ լինենք և աշխատենք ապագայում այլևս չը խաբվել: Հարկաւոր է մեզ՝ հայերի մտադրութիւններն ու կարգադրութիւնները լաւ ըմբռնել, որպէս զի գալիք վտանգից ազատ լինենք:

«Մենք այս մէկը երբէք չը պիտի մոռանանք, որ հայերը, ինչ միջոցներով էլ որ լինի, իրանց համար մի առանձին Հայաստան ստեղծելու ցնորքի մէջ են: Եւ այդ ցնորքը իրագործելու համար Երևանի, Ղարաբաղի և Կարսի շրջաններից մեզ, թուրքերիս, հեռացնելու եռանդի մէջ են: Պիտի հասկանալ, որ հայերը այդ նպատակը իրագործելու համար ամեն մի միջոց նկատի ունեն. թուրքերին այն կէտին պիտի հասցնեն, որ վերջիններս յարձակումներ գործեն, հայերին կոտորեն, որպէս զի հայերը սկսեն Եւրոպայի առաջ իրանց խեղճալի և անկար օրը ողբալ:

«Հայերն իրանց այդ ցանկութեանը հասնելու համար կամաց-կամաց զանազան ճանապարհներ պիտի հարթեն, իսկ այն, որը իրանց ոյժով չը կարողանան իրագործել, կանեն ռուս չինովնիկների ձեռքով, կաշառելով վերջիններիս հէնց այդ նպատակի համար հաւաքած միլիօնաւոր գումարներից: Իրանց նպատակին հասնելու համար գլխաւորապէս պիտի աշխատեն Կարսի, Նախիջևանի, Երևանի և Ղարաբաղի շրջաններում. ոչ մի միջոց չը պիտի խնայեն մեզ թուրքերիս նուաղեցնելու և թուլացնելու: Նոյն իսկ մեր օրօրոցի մանուկներին պիտի կոտորեն: Երբեմն էլ, իրանց շահերի համար, մեզ խնդրելու և հաշտվելու են: Սակայն պէտք է իմանալ, որ այդ հաշտութիւնը կեղծ և իրանց նպատակին հասնելու համար պիտի լինի, ինչպէս ասում են, երևան հանած աղուէսի բոյնը վարագոյրով կուզենան ծածկել:

«Ամեն անգամ, երբ հայերը թուրքերին հաշտութեան են հրաւիրել, ես չեմ հաւատացել և ասել եմ, որ այդ մի միջոց է ապագայի համար աւելի լաւ պատրաստվելու. և իրաւ, չէ անցել մի քանի օր հաշտութիւնից յետոյ, երբ մենք նորից ենթարկվել ենք կոտորածի:

«Պէտք է լաւ իմանանք, որ հայերի հետ որքան եղբայրաբար վարվենք, հաշտ լինենք, այնուամենայնիւ նրանք իրանց չար մտադրութիւնից ձեռք չը պիտի քաշեն: Միշտ աշխատելու են մեզ կուրացնել և ծածուկ կերպով իրանց անելիքը անել:

«Հայերը իրանց ազգային զօրքի համար լեռների վրայով ճանապարհ բանալու միտքը վաղուց ունէին. ռուսների երկիւղից էր միայն որ չէին կարողանում այդ միտքը իրագործել: Սակայն այժմ հայ-թուրքական ընդհարումները և հաղորդակցութեան ճանապարհների փակվելը նպաստեցին հայերի յիշեալ մտադրութիւնը իրագործելուն: Ռուս չինովնիկները խեղճն էլ, փառք Աստուծոյ, մի հաւի խելքի չափն էլ չունին...

«Այո, հայերը, ռուսների հետ միացած, Երևանի և Ղարաբաղի շրջաններում մեզ թուրքերիս նուաղեցնելով՝ պիտի սպասեն առաջիկայ յարմար մօմենտին, այսինքն Ռուսաստանի յեղափոխութեան վախճանին և դրա աջողութեան առաջին վայրկեանին, որպէս զի Ռուսաստանից աւտոնոմիա պահանջելով՝ կամաց-կամաց իրանց համար «Հայաստան» ստեղծեն:

«Հայերի յոյսը Թիւրքիայից վաղուց կտրվել. մնացին Կովկասը և Իրանը դրանց համար: Փառք Իրանին, սա էլ վաղ թէ ուշ կը զարթնէ և հայրենիքի պատիւը կը պաշտպանէ: Ուրեմն հայերի համար մնում է միայն Կովկասը: Եւ ահա այդ է պատճառը, որ այստեղ, Կովկասում, հայերը գիշեր և ցերեկ ռուսական զէնքերով կռիւ են մղում թուրքերի հետ, վերջիններիս թիւը նուաղեցնելու, և միաժամանակ սպասում յարմար մօմենտի:

«Ահա այս է գործի իսկական պատկերը, և հէնց այդ է պատճառը, որ հայերը մեզ հետ շարունակ կռիւներ են մղում: Թէ չէ՝ հայերը մեզ հետ երբեք թշնամի չեն եղել, նոյնպէս և մենք նրանց հետ: Ինչու համար Նուխու, Շամախու, Զաքաթալայի, Բաթումի և Ախալցխայի թուրքերը և հայերը միմեանց հետ հաշտ ապրում են. նրա համար, որ այդ տեղերի հայերը իրանց միւս տեղերի եղբայրակիցների նման որևէ նպատակ չունեն, հետևապէս և իրանց հարևան թուրքերի հետ կռիւ մղել չեն կամենում:

«Սակայն, Երևանում և Ղարաբաղում այդպէս չէ. հայերն իրանց ուշադրութիւնը կենտրոնացրել են այդ տեղերի վրա, այդ տեղերում են շարունակ թշնամութիւնը, կոտորածը և թալանը:

«Այժմ, այս ամենը մենք իմանալով, մեզ մնում է թշնամուն թշնամաբար դիմադրել. մեր գոյութիւնը պաշտպանելու համար այդ միանգամայն կարևոր է: Հարկաւոր է մեզ «Դաշնակցութեան» պէս ժողովրդին պաշտպանող մի կազմակերպութիւն ունենալ և մեր նենգ հարևաններին իրանց պարտականութիւնը ճանաչեցնել տալ: Ամեն տեղ կռւող և մեր ժողովրդին պաշտպանող պիտի լինենք: Նուխու, Շամախու, Բագուի, Ղարաբաղի, Դաղստանի, մի խօսքով ամեն տեղերի թուրքերս միացած, ձեռք ձեռքի տուած պիտի գործենք:

«Է՜յ, անհոգ և միամիտ կերպով մրափած թշուառներ: Դուք կարծում էք, որ հայերը այստեղ Հայաստան ստեղծելուց՝ ձեզ ձեր տեղերում հանգիստ կը թողնեն: Կարծում էք, որ մի անխիղճ ժողովրդի միջոց և հնարաւորութիւն տալուց յետոյ՝ դուք ձեր տեղերում հանգիստ և ազատ նստելու էք:

«Ո՜չ, ո՛չ, քնելու ժամանակը չէ: Ներկայումս, հայերի նպատակը ամբողջ աշխարհին յայտնի լինելուց յետոյ, մեր բանիմացներին, ղեկավարներին անհրաժեշտ է, որ մի րոպէ անգամ հանգիստ, ձեռները ծալած չը նստեն, այլ մեր ապագայ անելիքի համար միայն աշխատեն»:

ԳՈՐԾԱԴՈՒԼՆԵՐ ԿԱՐՍՈՒՄ

Գործադուլը տարածվել է և մեզանում: Օգոստոսի 4-ին գործադուլ արին քաղաքիս կօշկակար և չուստեկի արհեստաւորների բանւորներն իրանց 8—10 տարեկան աշակերտներով: Նախընթաց օրը մի թռուցիկով յայտնեցին իրանց կիսատ-պռատ և ոչ մշակված պահանջները Դաշնակցութեան արհեստակցական միութեան անունից և սկսեցին թափառել փողոցները, գետի եզերքները և Ենկի-շահար կոչված տեղը, ուր բանւորները սպասում էին ճաշ իրանց կազմակերպողներից: Թէև այս գործադուլը մի որոշ գործնական հետևանք չունեցաւ բանւորների համար, բայց մի կարևոր և օգտակար երևոյթ պարզվեց ընդհանուր հասարակութեան համար. պարզվեց որ, կազմակերպողներն ունեցել են իրանց սեփական շահերը աչքի առաջ, նրանք խմբապետներ են, նոյնիսկ խարեբաներ, իսկ նրանց հետևողներն անպատրաստ, անգիտակից գործադուլի մասին գաղափար չունեցողներ, միամիտներ և այլն: Ապացոյց դրան մեր ներկայ գործադուլ անող արհեստաւորներն են. նրանք այնքան անպատրաստ և անհասկացող էին, որ գործին պաշտօնական գոյն չը կարողացան տալ. չընտրեցին մի ներկայացուցիչ, իրանց կողմից չը բանակցեցին վարպետների հետ, կամ նրանց ներկայացուցչի հետ, չը կարողացան գործադուլ անել բոլորի համար. բաւական թւով բանւորներ և աշակերտներ չը մասնակցեցին գործադուլին, որովհետև ոմանք չէին հասկանում գործադուլի միտքը, ոմանք էլ չէին համակրում: Վերջապէս շատ բան կորցրեց այս գործադուլը, շատերը օգտվեցին, քչերը վնասվեցին. աւելի շատ վնասվեցին իրանք բանւորները. նրանցից շատերը համաձայնեցին և հին սովորութիւններով ու կարգերով համաձայն նստեցին իրանց բանին: Սա այժմ քչերն են գործի չը կպչողները:

Դեռ կօշկակարների գործադուլը ոչ մի հետևանքի չը հասած՝ նոյն հիւանդութեամբ վարակվեցին քաղաքիս հացթուխների բանւորները: Օրը կիրակի էր, ամսիս 13-ին, քաղաքն առանց հացի էր մնացել. ժողովրդի մէջ կայծակի արագութեամբ տարածվեց գործադուլի լուրը. ամենքը շտապում էին հաց ձեռք բերել, հաց չը կար. դժբաղդաբար բոլոր սովորական փակ էին և լաւաշ թխողների խանութները. այդ օրը ժողովուրդը բաւական նեղութիւն քաշեց: Հետևեալ օրը լաւաշ թխեցին. պարզվեց, որ միմիայն փռների բանւորներն են գործադուլ արել, նրանց չեն մասնակցել լաւաշ թխող բանւորները: Այստեղ ևս գալիս է ապացոյցը, որ ժողովուրդը դեռ պատրաստված չէ մեզանում: Գործադուլ անողների պահանջները տնտեսական են: 1. Ամսավճարներին աւելացնել 20%. 2. ամսական մի անգամ բաղանիք. 3. տարեկան երեք անգամ հանգստութիւն՝ Զատկին, Ծննդեան և ս. Աստուածածնի տօնին, երեք օրերով: Մնացածները երկրորդական խնդիրներ են:

Մինչև այսօր գործադուլը շարունակվում է:

Մ. Ռոկ.

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Օգոստոսի 22-ին

Մոլլա Ջալիլ և Ջալլի թաղերը, որոնք խառն են ու կից քաղաքիս հայկական մասին, թուրքերին են պատկանում, որոնք աւերակ են ներկայումս և անմարդաբնակ: Կոտորածից յետոյ 36 հոգի թուրքերից, հայերից և օֆիցերներից բաղկացած խառն մասնաժողովը հաշտութեան պայմանների մէջ մտցրեց, որ թուրքերը մինչև վեց ամիս չը վերադառնան իրանց վերոյիշեալ թաղը, ինչպէս և հայերը՝ Նորշէն և Երևանցոց թաղերը, մինչև երկու դրացիների կրքերը հանդարտանալը, մինչև փոքր ի շատէ խաղաղութեան իսկական դրաւականների երևալը:

Վեց ամիսը լրանալուց յետոյ հայերը միանգամայն հրաժարվեցին Նոր-շէն, Երևանցոց թաղերը վերադառնալուց, թուրքերն ևս չեկան Մոլլա Ջալիլ և Ջալլի թաղերը:

Երկու կողմերից ցանկութիւններ առաջ եկան կայքերի փոխանակութիւններ անելու. թուրք տնատէրերն էլ ըստ երևոյթին սրտով ցանկանում էին այդ փոխանակութիւնը, բայց վերջը ստուգվեց, որ մի գաղտնի մութ ոյժի ազդեցութեան տակ նրանք չեն կարողանում կայքերը փոխանակել. միւս կողմից յետաձգվեց իրանց թաղերում բնակվելու հարցը, ցոյց տալու համար, որ չեն ուզում վերադառնալ, ինչ ուզում է լինի. իսկ մի կողմից էլ նրանցից լոյս ընկան միջնորդներ, որոնք աշխատում էին թուրքաց թաղում գտնվող աչքի ընկնող հայերի տները, կայքերը փողով առնելու: Հայերը հրաժարվեցին առուծախս անելուց, առաջարկելով որ համաձայն են միայն կայքերի փոխանակութիւն անել:

Անցեալ շաբաթ, ինչպէս լսեցինք, թուրքերը թաթերի մզկիթում մի բազմամարդ ժողով են ունեցել: Խօսակցութեան առարկան եղել է Ջալլի և Մոլլա-Ջալիլ թաղեցիների վերաբնակվելու հարցը: Ժողովը որոշել է, որ իրանց հեղինակութիւնը բարձր պահելու համար անպայման այդ թաղեցիք վերադառնան հայոց թաղին կից իրանց թաղերը, կառուցանեն իրանց տները և ապրեն այնտեղ:

Որոշումից յետոյ իրանց ցանկութիւնը յայտնել են Ալֆաթանին, վերջինս համաձայնութիւն է տուել:

Երէկ երեկոյեան քաղաքիս վերահսկիչ գնդապետ Սաֆոնովը գեներալ-նահանգապետի կողմից գալով փոխանորդ Կորիւն վարդապետի մօտ, յայտարարեց, որ թուրքերը որոշել են գալ հայոց թաղին կից Ջալլի և Մոլլա-Ջալիլ թաղերում կառուցանելու իրանց տները. առաջարկեց, որ հայերը նրանց հետ կորեկտ վարվեն, չը խանգարեն նրանց զբաղմունքները և ոչ մի առիթ չը տան անկարգութեան, հակառակ դէպքում կարող են վատ հետևանքներ առաջ գալ:

Վարդապետն ասաց, որ «թուրքերի՝ իրանց կայքն ու տունն է, կարող են վերադառնալ, մենք դրա դէմ ոչ մի արգելք յարուցանել չենք կարող. բայց ցաւն այն է, որ թուրքերը չընդունեցին իրանց համար մեր շատ ձեռնտու պայմանները, ինչպէս կայքերի փոխանակութեան առաջարկութիւնները. միջոցներ ձեռք առէք, որ ձեր ներկայութեամբ հայ հասարակութեան ներկայացուցիչները տեսակցեն թուրք ներկայացուցիչների հետ վերջին անգամ այդ առիթով խօսելու համար. գուցէ վերջում հնար լինի նրանց համոզելու կայքերի փոխանակութեան վերաբերմամբ:

«Բացի դրանից—աւելացրեց Կորիւնը,—թուրքերը վերադառնալով հայոց մասը, կռիւն ու ղալմաղալը մշտական, անխուսափելի են լինելու: Մէկի եղբայրը, միւսի հայրն ու մայրն են սպանվել, երրորդի որդին, և նրանք ամենայն օր իրար հետ շփվում են և ամենահասարակ առիթից, մի հաւի, մի ձուտի, մի շան, մի կատուի հարցից առաջ են գալու վէճեր և ընդհարումներ»: Եւ Կորիւնը հաշտութեան երաշխաւորութիւն չէ տալիս և այդ համարում է բացարձակ մի պրովօկացիա թուրքերի կողմից:

«Այդ բոլորը հաւանական է — աւելացրեց գնդապետը — բայց վերաբնակութեան վճիռն անդառնալի է նրանց համար»:

Ի դէպ, երբ գեներալ-նահանգապետի նոր եկած ժամանակ Կորիւն վարդապետն, իբրև հայ հոգևորական, մի խնդրով դիմեց Ալֆաթանին, վերջինս ասաց, որ հոգևորականները բացի աղօթքից ոչ մի հարցի մէջ խառնվելու իրաւունք չը պէտք է ունենան: Իսկ ներկայումս առաջարկում են, որ հայերի կողմից երաշխաւորութիւն տայ, որ ընդհարում չը լինի:

Զօրքը, զէնքը, թնդանօթները, ոստիկանութիւնը, անսահման իշխանութիւնը ձեր ձեռքին է, ձե՛զ է պարտաւոր խաղաղութեան երաշխաւորութիւն տալու. դո՞ւք թէ հոգևորական Կորիւնը՝ Ջափարանց ցաւակի է:

Սագան

ԱԽԱԼՔԱԼԱՔՆ ԷԼ ԿԵՂՏՈՏՎԵՑ

Ախալքալաք, օգոստոսի 20

Ինչպէս ամեն տեղ, մեզանում էլ ժողովրդի միամիտ ու հասարակ դասը, խաղալիք դարձած մի քանի բաղդախնդիրների ձեռքին, իրանց կորցրած չը գիտէ թէ ինչ անէ և ում հաւատայ: Այն պարոնները, որոնք ժողովրդին առաջնորդելու պարտականութիւնն են վերցրել իրանց վրա և որոնք ամեն գոյնի ու պրօֆեսիայի մարդիկ են, մեծ մասամբ վարժապետ, ուսանող, դպրեաց, վաճառական են, իրանց նպատակ են դրել ինչպէս և լինի տապալել հակառակորդին: Դրա համար էլ երկու մասի բաժանված հասարակ ժողովրդին էլ բաժանել են իրանց մէջ և ահագին ատելութեան և անհամաձայնութիւնների սերմեր սփռել:

Խօսքս մեր դպրոցական հարցի մասին է: Դեռ անցեալ տարի էր, որ այս տարվայ կռւող պարոնները մեր մասամբ համալսարանական և մասամբ էլ համալսարանականման հոգաբարձուների հետ տնավարի կերպով համաձայնութեան եկան, պաշտօնները բաժանեցին և ամենքը իրանց բաժինն ստանալով տաղ արեցին, լռեցին: Սակայն տարվայ մէջ ինչ ինչ պատճառներից (երևի կռւող կողմերից մէկը ուսուցչութեան նոր թեկնածուներ էր ճարել) մեր ուսուցիչների և հոգաբարձուների մէջ խլրտումներ ընկան:

Նախ 3 հոգաբարձուները միացած ուսուցչական խմբի մեծամասնութեան հետ տապալեցին անցեալ տարվայ «սիրելի և իր պաշտօնին հմուտ» աւ. ուսուցիչ պ. Դիլանեանին (այժմ Ներսիսեան դպրոցի ուսուցիչ): Այս բանից վիրավորված համալսարանական հոգաբարձուներից մէկը և մի երկու վարժուհի հրաժարական տուին:

Այնուհետև այս պաշտօնազուրկ պարոնները և պարոնուհիները աջ ու ձախ ընկնելով, մի տեղ դասակարգային կռւի, մի ուրիշ տեղ համազգային գաղափարների, երրորդ տեղում անձնական բարեկամութեան կամ [illegible] կռւի անունից խօսելով իրանց թայֆան մեծացրին և տապալեցին իրանց տապալողներին:

Գործունէութեան երրորդ շրջանում արդէն սկսվել է բարեկենդան վայնասունը: Ամեն կողմ պաշտօնազուրկ հոգաբարձուներ և ուսուցիչներ, պաշտօն որոնող ուսանողներ և [illegible] օրիորդներ տակն ու վրա են եղել: Հացի խնդիր է հա... Եւ ինչ է դուրս գալիս: Մի պարոն, որ դեռ երեկ հայհոյում էր Դաշնակցութեանը իր զինւորից սկսած մինչև բիւրօն, այսօր միացած նրանց հետ տապալում է «հակադաշնակցական» հոգաբարձուներին և ուսուցիչներին: Եւ ընդհակառակը, մի պարոն, որ դեռ երեկ դաշնակցական էր և [illegible], այսօր յանուն պաշտօնի և քաղցած փորի դրօշ է պարզել Դաշնակցութեան դէմ և յանուն «հասարակական-սոցիալական» գաղափարի կռւում է: Վերջապէս եթէ մեր քաղաքը մանել մի օտարական, որը ծանօթ չէ և չը գիտէ թէ ով ում փեսան է, ով ում քենեկալն ու խնամին է, կամ թէ ով ինչ պաշտօն է ունեցել և ինչ պաշտօն է ուզում ունենալ, կապշի, կը զարմանայ, թէ այս պ. պ. գործիչներից ո՞րը ինչ կուսակցութեան է պատկանում և ինչ սկզբունքների է ծառայում:

Դէպքը ըստ վերջինը այն է, որ դաշնակցական ընտրելիականները ճիգ ու ջանք թափելով մի փոքրիկ ժողով կազմեցին և հեռացրին պաշտօններից թէ հոգաբարձուներին և թէ վերջիններիս հրաւիրած ուսուցիչներին: Այժմ էլ այս վերջին հեռացվածներն են աջ ու ձախ մարդիկ որսում, որի հետևանքը պէտք է համարել այն, որ այսօրվայ ժողովին, որը գումարվել էր աւ. ուսուցչի հետ հրաժարված մի հոգաբարձուի փոխարէն նորն ընտրելու և բողոքելու աւ. ուսուցչի արձակման դէմ, փոխանակ 500 հոգու (որոնք ստորագրել էին «Ալիք»-ում տպված բողոքին) եկել էին հազիւ 100 հոգի և դրա հետ 70 հոգի էլ հակառակ կողմից: Մեխականները քիչ էին. ժողովը չը կայացաւ: Բայց պարոններ ուսուցիչներ, հոգաբարձուներ և ընտրելիքներ ուսանողներ, բաւական է ձեր անձնական հաշիւների ու պաշտօնների համար խեղճ ու կրակ արհեստաւոր-աշխատաւորին գործից ու զբաղմունքից զրկէք ու ձեր ընտրելիներին զոհէք: Բաւական է դպրոցը թայֆայութիւնների ասպարէզ դարձնէք:

Իսկ դու, խեղճ արհեստաւոր ու աշխատաւոր, սթափվիր, հասկացիր, որ քեզ խաբում են, որ օգտվելով քո միամտութիւնից քեզ անձնականութեան զոհ են դարձնում: Չէ՞ որ ահա սեպտեմբերը գալիս է և ձեր հարիւրաւոր անմեղ երեխաները փողոցում պիտի մնան: Ճանաչիր ինքդ քեզ, թքիր թէ այս և թէ այն թայֆայի վրա և դու ինքդ անօրինիր քո գործերը քո բնական խելքով ու մաքուր անկաշառ սրտով, միայն թէ շուտով, շուտով, ապա թէ ոչ դու էլ անգիտակցաբար մասնակից եղած կը լինես դպրոցին ու կրթական գործին խանգարելու խայտառակ գործունէութեանը: Դպրոցը, եկեղեցին քոնն են, և դու քո սեփական խելքով կառավարիր:

Անուշաւան

ԱՆՆԵՐԵԼԻ ՄՈՌԱՑՈՒԹԻՒՆ

(Նամակ խմբագրութեան)

Էջմիածնում գումարված դաշնակցական կենտրոնական բիւրօն, ի թիւս այլ [illegible] գիւտերի, մի նոր գիւտ էլ է արել. եթէ չէք հաւատում՝ կարդացէք «Զանգի» № 10: Մի քանի մարդիկ միևնոյն խնդրի նկատմամբ դժբաղդութիւն են ունեցել դաշնակցականների հակառակ համամիտ կարծիք յայտնելու. հետևութիւն—բլոկ են կազմել. ողորմելի տրամաբանութիւն, մինչդեռ Էջմիածնում հայ կուլտուրական բաղդը որոշողներին պէտք է պարզաբանել՝ թէ այլ է համամիտ լինել և այլ է բլոկ կազմել: Բայց չէ, ստուտը պարզ է. կամենում են մի անգամ էլ առիթից օգտվել յիշելու «կղերական-մշակական բլոկ» արտայայտութիւնը. «Մշակին» յետադէմ ցոյց տալու համար: Հարցնում ենք Cnr բիւրօյի անդամներին՝ մոռացե՞լ էք, թէ չիմանալու էք տալիս, որ, ըստ ձեր տրամաբանութեան, դուք աւելի ևս կղերական-դաշնակցական զօրեղ բլոկ էք կազմել: Միթէ մոռացել էք ձեր դաշնակիցներին՝ ընկեր Արսէն, Տաճատ և Խարէն վարդապետներին:

Գ. ս. Չէօրէքչեան

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Էջմիածին, 20 օգոստոսի

Այսօր կարդալով «Զանգի» վերջին համարներից մէկում Նոր-Նախիջևանից գրված թղթակցութիւնը մի դաշնակցական կողմից այնտեղ կատարված պատգամաւորական ընտրութիւնների մասին, ես բոլորովին չը զարմացայ այն իրողութեան վրա, թէ ինչպէս այդ ողորմելի յօդուածագիրը փաստը այնքան ակներև լուսաբանելու իր ամբողջ հանճարն է գործ դրել, դարձնելով յօդուածը մանր ինսինուացիաների մի կոյտ: Չեմ զարմանում մանաւանդ այն հասարակ պատճառով, որ այդ քաղաքում պատուիրակների ընտրութիւնների ժամանակ եկեղեցում աժոռ ու փայտեր ճօճող, խուժանային գուգուոցներով անհարկաւոր մարդիկ այլ լուսաբանութիւն երբէք չէին էլ կարող տալ ընտրութիւններին, քանի որ ընտրութիւնները հակառակ իրանց քէֆի արդիւնք ստացան, երբեք չէին կարող առանց անամօթ ինսինուացիայի ու կանացի ստոր բամբասանքների մի ողորմելի յօդուած թխել: Ես այլ բան, հաւատացէք, չէի էլ սպասում. յոյսերս միանգամայն արդարացան, շատ գոհ եմ…

Առայժմ այսքան: Մի այլ անգամ մանրամասն կանգ կառնեմ այն փաստերի լուսաբանութեան վրա, այն խայտառակ սանձարձակութիւնների, որոնք կատարվել են Նախիջևանի պատուիրակների ընտրութիւնների ժամանակ, և գուցէ մի քանի այլ փաստեր ևս արձանագրեմ:

Յար. Թումանեանց

Գանձակ, յուլիսի 25-ին

Խնդրում ենք յանուն ճշմարտութեան զետեղել ներկայ թղթակցութիւնը ձեր լրագրի մօտակայ համարներից մէկում:

Կիրակի, յուլիսի 22-ին, մեր ընկեր Վահան Ցովսէփեանը սաստիկ ծեծի ենթարկվեց «Դաշնակցութիւն» կոչված յեղափոխական կազմակերպութեան կողմից և բանտարկվեց: Ըր նայած մեր բողոքներին, որով անմիջապէս պահանջում ենք միջնորդ դատարան, դաշնակցութեան ներկայացուցիչները բացէ ի բաց մերժում են պատճառաբանելով թէ մենք ունենք սեպհական դատարան, իսկ նրանց դատարանը յայտնի է իւրաքանչիւր հայի, ով մի անգամ դժբախտութիւն է ունեցել ենթարկվելու: Այն բռնակալութիւնը, որ գործ են դրել նրանք Գանձակում այս վերջին ամիսների ընթացքում, իրանց դատաստաններով, մտրակներով և աքսորներով, անցնում են ամէն բարբարոսութիւնից: Հարցը կրելով հասարակական բնաւորութիւն, պէտք է մեր մամուլը լուրջ ուշադրութեան ենթարկէ. հակառակ դէպքում կարող է վատ հետևանքներ ունենալ: Սա հինգերորդ անգամն է, որ նրանք այդպիսի արարմունք են ցոյց տալիս մեր ընկերների վերաբերմամբ, այսպէս կոչված ս.-դեմօկրատներին: Նրանց ասելով, հայերին ներկայումս կարևոր չէ «սօցիալիզմը», ուստի ոչ ոք չը պէտք է դրա մասին խօսէ: «Բացի դաշնակցութիւնից չիք փրկութիւն հայերին»:

Այս դէպքի մասին գրված է նաև միւս հայ թերթերին և հեռագրված «Կայծին»:

Փայլակ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայրաքաղաքի լրագիրներում տպված է Պետեր. Հեռ. գործ. հետևեալ հեռագիրը. «Կովկասի Փոխարքայի դէմ դաւադրութիւն կազմելու և այդ առիթով Թիֆլիսում կատարված ձերբակալութիւնների մասին՝ արտասահմանում տարածված լուրը միանգամայն մտացածին է հանդիսանում»:

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը մերժել է Թիֆլիսի էլէկտրօքարշի անոնիմ ընկերութեան այն միջնորդութիւնը, որը վերջինս յարուցել էր Նախալօվկայի էլեկտրական գծի կառուցելը մէկ տարով հետաձգելու մասին:

Բորչալուի գաւառի Փօքր-Ղարաքիլիսայի բնակիչները միջնորդութեան են յարուցել՝ թոյլատրելու իրանց տեղափոխվել—Թուրքիա գաղթող թուրքերի Կարսի շրջանի Մօքուզ և կևլի գիւղերը:

Գանձակի ժամանակաւոր գեներալ-նահանգապետ գեն.-մայոր Ալֆտանը հաղորդում է, որ իր րայօնում քոչւորների եայլաղներից դէպի դաշտավայրերը իջնելը վերացուել է աջող կերպով:

Պետերբուրգից Թիֆլիս վերադարձած Պետական Դումայի նախկին անդամ Նոյ Ժորդանիան մեկնել է Թիֆլիսից, յայտնի չէ թէ ուր:

Ի նկատի առնելով գրաշարների և ցրիչների ժամանաւոր գործադուլները և նրանց կողմից ներկայացրած չափից դուրս անիրագործելի պահանջները, վրացերէն «Շրոմա» լրագրի հրատարակելը ընդհատվել է:

Ինչպէս հաղորդում է «Յ.» լրագիրը, Իվ. Գր. Խաչատուրովը կազմակերպել է լրագրավաճառների արտել տեղական և մայրաքաղաքի լրագիրներ վաճառելու համար:

Ստացանք Լեոն Բաբայեանի կազմած «Դասագիրք ընդհանուր աշխարհագրութեան», քաղաքական մաս—Աւստրալիա, Աֆրիկա, Ասիա, և Ամերիկա. հրատարակութիւն Գ. Գալստեանի. գինն է 65 կոպ.: 2) Գ. Լևոնեանի «Գծագրութեան օրինակներ» հայոց դպրոցների համար, տետրակ Ա., հրատարակութիւն «Գուտտենբերգ» գրավաճառանոցի. գինն է 20 կոպ.: 3) Խան-Ազատի կազմած «Ինչպէս պէտք է կազմել սահմանադրութիւն» գրքոյկը, հրատարակութիւն Լ. Բեսհիեանի. 56 երես. գինն է 10 կոպէկ:

Երէկվանից Թիֆլիսի «Կրուժօկում» միջնակարգ դպրոցների աշակերտներին մուտքը արգելված է:

Երէկ ձերբակալել են գործադուլների առաջնորդող 12 քիապչիներին և ուղարկել ոստիկանապետի մօտ:

Երէկ Կոստանդնուպօլսից Թիֆլիս վերադարձաւ Կովկասի Փոխարքայի դուստր Գր. Ս. Ի. Վօրօնցօվա-Դաշկօվան:

Օգոստոսի 15-ին, երեկոյեան, Նոր-Պետերհօֆից Պետերբուրգ են տարել գեներալ Մինի սպանութեանը մասնակցողին: Կալանաւորին տարել են առաջին կարգի վագօնի առանձին կուպէում, զինւորների և ժանդարմների սաստկացրած հսկողութեամբ: Արտաքին նայելով, նա դեռ ևս բոլորովին երիտասարդ է: Նա Նոր Պետերհօֆ էր եկել Իւրիէվից գեներալ Մինի սպանութիւնից քիչ ժամանակ առաջ: Կալանաւորութեան ժամանակ կալանաւորը կարողանում է խիստ պատառոտել մի ինչ որ թուղթ և կլանել: Թուղթը ստամոքսից հանելու համար բալթիական երկաթուղու կարիխնեան են ուղարկում նրան: Բժիշկը արտափոխութեան միջոցներով կարողանում է դուրս հանել այդ փաստաթուղթը:

Օգոստոսի 15-ին, երեկոյեան ժամը 5-ին, Կարսի կայարանի պլատֆորմայում ձերբակալվել է Թիֆլիսի ոստիկանապետ փոխ-գնդապետ Մարտինովի կեանքի դէմ մահափորձող—Թիֆլիսի վրաց ազնուականների դպրոցի սան Ս. Ա. Ցիցիանովը, Սիմ. Ցիցիանովը՝ ռումբով բռնած Ղազախի գաւառի բնակիչ Գէորգ Վարդանովի ընկերն է: Պրիստաւի կառավարութիւնը տանելով Ցիցիանովին ձերբակալել են և տարել են բերդ: Տեղ հասնելով, Ցիցիանովը օգտվելով բօպէից, դիմել է փախուստի դէպի մօտակայ արևածաղիկների պարտէզը, թռչելով ցանկապատի վրայով, բայց բռնվում է: Ուղեկցող 2 պահակները համաղարկ են պարպում օդի մէջ՝ փախստականին վախեցնելու համար: Ցիցիանովը ընկնում է գետին և կամենում է փորսող տալով փախչել, բայց, տեսնելով, որ իր ջանքերը ի դերև են ելնում, ինքնակամ գնում է բանտարկվելու. («Ր. Կ.»):

Լուրերին նայած, գեներալ Րեննենկամպֆը գրաւելու է Թուրքեստանի գեներալ-նահանգապետի և Թուրքեստանի զինուորական վիճակի զօրքերի հրամանատարի պաշտօնը:

(«Русск. Вѣст.»)

Պրեմիեր-մինիստրը շարունակ ստանում է նամակներ գիւղացիական ժողովներից և զանազան միտինգներից, որոնց մէջ գիւղացիները պնդում են, որ ազատութիւն շնորհվի Պետական Դումայի բանտարկված անդամներին: («Р. В.»):

Ոստիկանութեան դեպարտամենտը օգոստ. 17-ին առաջարկել է Արխանգէլսկի, Վօլօգդայի և Օլօնեցկի նահանգի աքսորականներին, որ միջնորդութիւն են յարուցել արտասահման մեկնելու,—մեկնել, միայն այն պայմանով, որ երկու տարվայ ընթացքում այլ ևս Ռուսաստան չը վերադառնան: Հակառակ դէպքում, վերադարձածները կենթարկվեն մեծ հսկողութեան: «(Р. В.»):

Ոստիկանական ծառայութիւն կատարելու և անկարգութիւնները ճնշելու գործին մասնակցելու համար Կիէվի զինուորական վիճակի զօրքերին շնորհած է 100,000 րուբլի, որ փոխադրած է ինտենդանտական վարչութիւնը: («Р. В.»:)

Բարձրագոյն հրամանով հեռացված են իրանց պաշտօններից Թուրքեստանի գեներալ-նահանգապետ և Թուրքեստանի զինուորական շրջանի հրամանատար գեներալ Սուբբոտիչը և Ամուրի շրջանի զինուորական նահանգապետ Պոտեխատինը: Առաջինը նշանակվում է զինուորական խորհրդի անդամ, իսկ երկրորդը գեներալնի շտաբում է մնում: («Страна»):

Օդեսսայի կրեզոսները, «Р. Сл.»-ի ասելով, շարունակ ստանում են նամակներ, որով նրանցից փողի պահանջներ են անում: Հակառակ դէպքում սպառնում են պայթեցնել նրանց տները: Յայտնի միլիօնատէր Մարազլիից պահանջում են 500,000 րուբլի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Սալմաստ, օգոստոսի 1-ին

Քրդերն իրանց չարագործութիւններով չափն անց կացրին. երկու շաբաթից ի վեր ամբողջ Սալմաստի վրա նրանց սարսափն է թագաւորում. օր չի անցնում, որ թալանի, սպանութիւնների լուրեր չը լսվեն: Պօստի կանոնաւոր երթևեկութիւն, խանգարված, մի քանի գծերի վրա ճամբորդութիւնը խիստ վտանգաւոր լինելով դադարեցրած է: Խօյի գեաղուկում սպանված են սուրհանդակի ձիաւորներից 3 հոգի. և պօստը թալանված է. անցորդներից և խաղաղ երկրագործներից սպանվածների թիւը 35—40 է հաշվում. քրդերի գազանութիւններին ենթարկվողները թուրքերն են միայն: Քուրդ ասպատակախմբի (որի թիւը, ասում են, մօտ 300-ի է հասնում) ղեկավարներ Միրզան և Սմըկօն (առաջինը՝ Ջահվար-աղայի հաւատարիմ ծառաներիցն է, որ անցեալ տարվայ Թաւրիզի դաւադրութիւնից ազատվեց. իսկ երկրորդը՝ դաւադրութեամբ սպանված քուրդ աղայի եղբայրն է) ասելիս են եղել, որ Ջահվար-աղայի գլխի մազերի թիւ չափ՝ թուրքերի պիտի սպանեն, առանց խտրութեան: Վրէժառուները մէկի միջոցով լուր էին ուղարկել Սալմաստի հայերին և նրանց մէջ գտնված օտարականներին, որ նրանք թող միամիտ մնան, նրանք չեն վնասի իրանցից, նրանց մի մազին անգամ դիպչելու նպատակ չունեն, թէ իրանց հաշւեյարդարութիւնը թուրքերի հետն է միայն. և իրա՛ւ, մինչև հիմա թալանված բազմաթիւ գիւղերի մէջ. մի գիւղ չը կայ հայաբնակ, և թէ իսկի մի հայ չէ սպանված:

Այս ընդհանուր սարսափի տակ, մի քանի գիւղերի թուրքեր երէկ թափվեցին հայ գիւղերը ապաստան գտնելու նպատակով: Թէև հեռագրով դիմումներ եղան և լինում են Թաւրիզ այս անելի դրութեան առաջն առնելու համար, սակայն ցայժմ ոչ մի աջող հետևանք չունեցան աւազակների դէմ ուղարկված թուրք ձիաւորների ջանքերը. վերջինները՝ թէ թուի քչութեան և թէ քաջութեան պակասութեան պատճառով չեն համարձակվում քրդերին հետևել և յետ են ծկում:

Երէկ, Թաւրիզի իշխանութեան կարգադրութեամբ, Դիլման կանչվեց Ճարայի քուրդ կառավարիչ և սահմանապահ Իսմայիլ աղան, որը, ինչպէս թէ, պարսիկ ձիաւոր զօրքի հետ պիտի մաքրէ Սալմաստը այս պատիժ-պատուհաս եղեռնագործներից:

Սալմաստի թուրք խղճուկ ամբոխին չար մտահոգութիւն է եղել և Թեհրանի յուզումները, որոնք՝ իրանց հայեացքով երկրին մեծամեծ դժբաղդութիւններ են նախագուշակում:

Հացաբոյսի բերքը խարուսիկ է երևում, 1-ին՝ առ հասարակ 6—7 է միայն տալիս: Մի բեռ ցորեն ծախվում է 8—9 թումանով, երկիւղ կայ շուտով աւելի բարձրանայ, հրապարակներում՝ ծախելու համար թափած ցորենը՝ խլխլվում է գնողների կողմից, որ կալի ժամանակ լաւ նշան չէ: Հացի համար տագնապողների թիւը բազմաթիւ է, ամեն ժողովուրդներից էլ:

Քուրդ աղբիւրից ստացված լուրի համաձայն, Վանում արիւնահեղ ընդհարում է տեղի ունեցել տաճիկ զօրքի և հայ յեղափոխականների միջև (վերապահութեամբ ենք հաղորդում այս լուրը):

Սահմանագլխում (Բաշկալէ-Սալմաստ գծի վրա) 14 բէօլիւկ տաճկական զօրք կայ տեղաւորված, որոնք հսկում են, որպէս թէ, որպէսզի ֆէդայիների խմբեր չանցնենան ներսերը:

Քանի օր առաջ 4 հոգի վանեցիներ են սպանված այդ գծի վրա, որոնք ծածկաբար Պարսկաստան էին ուզում անցնել պանդխտելու, հաց աշխատելու նպատակով:

Ցովհ.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

23 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 օգոստոսի: (Պաշտօնական): Հրատարակված է—զօրքերի մէջ հակակառավարչական մտքեր տարածելու համար որոշած պատասխանատուութիւնը սաստկացնելու և յիշեալ յանցաւոր գործողութիւններին վերաբերեալ գործերը զինուորական և ռազմածովային դատարանին յանձնելու առիթով մինիստրների խորհրդի կազմած և բարձրագոյնս հաստատած որոշումը:

Ստոլիպինին ցաւակցական արտայայտութիւններով հեռագիրներ են ուղարկել Նիդեռլանդիայի, Բաւարիայի և Նորվէգիայի կառավարութիւնները: «Прав. Вѣстн.»-ում տպված են վերջին ժամանակներս Ստոլիպինի անունով ստացված հեռագիրները—հասարակական ինքնավարութիւններից, բօրսային ընկերութիւններից, լրագիրների խմբագրութիւններից, քաղաքական կուսակցութիւններից, — որոնց մէջ ատելութիւն և զայրոյթ է յայտնած՝ չարագործութեան առիթով, խնդակցութիւն՝ վտանգից զերծ մնալու համար, ցանկութիւն՝ որդոց ապաքինվելու համար, հոգու ոյժ և արիութիւն՝ տերրօրի դէմ կռւելու և աշխատանք՝ հայրենիքի բարիքի համար: Բացի սրանցից, Ստոլիպինին ցաւակցութիւն են յայտնել շատ և շատ պաշտօնական անձինք: Նշանակվում են.—Զաբայկալեան շրջանի զինուորական-նահանգապետ գ.-մ. Սիչէվսկին—Ամուրեան շրջանի զինուորական նահանգապետ և Ամուրեան կօզակների նակազնոյ ատաման և ընդհանուր զօրքի հրամանատար, Պսկօվի կադէտական կորպուսի վերատեսուչ գեն.-մայոր Շիլդերը՝ Սեմէնովսկի գնդի հրամանատար, գնդապետ Օրլովը՝ Հէլսինգֆօրսի կոմենդանտ:

ԿՐՕՆՇՏԱԴ, 23 օգոստոսի: Վաղը զինուորական դատարանը քննելու է նաւաստիների ապստամբութեան գործը: Մեղադրվում են 800-ից աւելի մարդ: Դատարանային դահլիճի մուտքը փակ է լինելու, նոյնիսկ լրագիրների թղթակիցների և ընդհանրապէս հասարակութեան համար:

ՄՈՍԿՎԱ, 23 օգոստոսի: Միչկօվի տանը ոստիկանութիւնը գտել է ռումբեր, ատրճանակներ, հրացան և մի պուդ փամփուշտ: Ձերբակալված են 2 ուսանողուհիներ:

ԻՒԶՕՎԿԱ, 23 օգոստոսի: Գաւառական իսպրավնիկը յայտարարել է, որ տուրքեր չը վճարողները կը դատվեն զինուորական դրութեան օրէնքներով:

24 օգոստոսի

ՊԱՐԻԶ, 23 օգոստոսի: Բացվեց եպիսկոպոսների ընդհանուր համագումարը: Մասնակցում են 82 եպիսկոպոսներ: Նիստերը տեղի են ունենում դռնփակ: Մամուլը տեղեկութիւններ չէ ստանում: Երեկոյեան նիստից յետոյ եպիսկոպոսները պապին մի հեռագիր են ուղարկել, որով յայտնում են իրանց անխախտ հնազանդութիւնը:

ԻՎԱՆՕՎՕ-ՎՕԶՆԵՍԵՆՍԿ, 23 օգոստոսի: Գործարանական Պիչուգէ գիւղում տեղի են ունենում բանւորական միտինգներ: Այս օրերս տեղի է ունեցել մի միտինգ սօցիալ-դեմօկրատների ղեկավարութեամբ: Ներկայ են եղել 3000 հոգի:

ՄՈՍԿՎԱ, 23 օգոստոսի: Անյայտացել է Մոսկվայի երկրագործական ուսումնարանի տեսուչ և գիւղատնտեսական ընկերութեան անդամ Բէկէտօվը, տանելով իր հետ 40,000 րուբլի:

ԺԸՆԵՎ, 23 օգոստոսի: Դաշնակցական խորհրդի անդամ Րուխէրի նախագահութեամբ՝ բացվեց երկրորդ միջազգային կոնգրէսը՝ բնակարանների առողջապահութեան հարցերը քննելու համար: Ներկայ է, ի միջի այլոց, Մոսկվայի պատգամաւորը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 օգոստոսի: Ներկայումս գոյութիւն ունեցող արտաքին գործերի մինիստրութեան գործակալների փոխարէն մտադրվում է հիմնել գեներալ-հիւպատոսարաններ՝ Խարբինում, Մուկդէնում, Նիրինում, Ցիցիկարում և Դալնիում. փոխ-հիւպատոսարան՝ Թաւչէնդզզում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 օգոստոսի: Օգոստոսի 1-ից մինչև 15-ը Չէլիաբինսկի ցուցակագրական կէտից դէպի Սիբիր են ուղարկվել 15,214 գաղթական ընտանիքներ երկու սեռից, խօդակներ 38,398 հոգի: Վերադարձել են միևնոյն կէտից նոյն ժամանակամիջոցում 977 գաղթական ընտանիքներ՝ ընդամենը 6072 հոգի երկու սեռից և 12,901 խօդակներ:

ՖԵՕԴՕՍԻԱ, 23 օգոստոսի: Գնդակների չորս հարվածներով իր բնակարանի մօտ սպանվել է պրիստաւի օգնական Մուրավեօվը: Չարագործները անյայտացան:

ՄՈՍԿՎԱ, 23 օգոստոսի: Դոնեան կօզակների գնդի զինւոր Չերպանօվը նահանգական դատարանից դատապարտվեց բերդարգելութեան և զինուորական կոչումից զրկման նրա համար, որ դեկտեմբերեան գործադուլի ժամանակ հակառակ տուած հրամանների, որ գնդի տեղաւորման րայօնում չը թողնել ապստամբներին, նա թողել է վերջիններին և թոյլատրել, որ նրանք դուրս կանչեն կօզակներին և ճառեր արտասանեն, և հրաւիրում էին մասնակցել գործադուլին, իսկ ինքը ներկայ գտնվելով, ոչ մի միջոց չի ձեռնարկել ցրվելու միտինգը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 օգոստոսի: Լրագիրների այն լուրերը, իբր թէ ոստիկանութեան դեպարտամենտում պատրաստվում է այն մարդկանց ցուցակը, որոնք ադմինիստրատիվ կերպով պէտք է սեպտեմբերի 1-ից աքսորվեն մայրաքաղաքից—ուղիղ չեն: Այդպիսի աշխատանք ոստիկանութեան դեպարտամենտում տեղի չէ ունեցել: — Ընդհանուր տարրական ուսում մտցնելու առիթով լուսաւորութեան մինիստրի օգնական Գերասիմօվի նախագահութեամբ և հիմնարկութիւնների ներկայացուցիչներից մի խորհուրդ է կազմվել ապագայ տարվայ ընդհանուր տարրական ուսումն մտցնելու կարիքներին բաւարարութիւն տալու համար՝ մինիստրների խորհուրդը յատկացրել է 5 ու կէս միլիօն րուբլի: Օգոստոսի 18-ից կասնվի երկաթուղային տուրք—մի հինգերորդական կոպէկ պուդից այն ապրանքների, որոնք կը ներմուծվեն արտասահմանից Ռուսաստան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 օգոստոսի: Լուսաւորութեան մինիստրը յայտնել է, որ լիւտերական դաւանութեան պատկանող անձինք կարող են դասաւանդել տարրական դպրոցներում, գոյութիւն ունեցող ընդհանուր կանոնների հիմունքների համաձայն: Գլխաւոր զինուորական շտաբը արգելել է պահեստի զինւորների փոխերը և իրերը ուղարկել՝ գաւառական հիմնարկութիւնների և զինւորական իշխանաւորների միջոցով:

ՊԱՒԼՕԳՐԱԴ, 23 օգոստոսի: Գեներալ-նահանգապետը յայտարարել է, որ այն անձինք, որոնք պետական կարգը և հանգստութիւնը խանգարելու համար կը տարածեն ստայօղ լուրեր, կենթարկվեն զինուորական դատարանի:

Կ. ՊՈԼԻՍ, 23 օգոստոսի: Լուրերին նայած, Բ. Դուռը պատերազմական պատրաստութիւններ չէ տեսել, այլ ձեռք է առել նախազգուշացման միջոցներ Բօլղարիայի արագ մօբիլիզացիայի առաջն առնելու համար:

ԿԱԼԿՈՒՏԱ, 23 օգոստոսի: Բրինձի անբերութեան պատճառով Բենգալիայում սովը մեծանում է: Բրինձի գները բարձրացան չը տեսնված չափերով: Բնիկները կողոպտում են շտեմարանները: Ջինգուրէում կազմակերպվեց մի գաղտնի ընկերութիւն «Ոսկի Բենգալիա» անունով, որ բաց թողեց մի կոչ.—«Հարկաւոր է հաւաքել 50,000 մարդ, պատրաստ, մեռնելու հայրենիքի համար» վերնագրով:

ՄՈՍԿՎԱ, 23 օգոստոսի: Ձերիթանի տան մէջ ոստիկանութիւնը բացեց զէնքերի պահեստ. գտնվել են ռումբ, մի քանի ատրճանակներ, սրեր. կալանաւորվեց երկու հոգի:

Վերջին ժամանակներս ուղարկված է հայրենիք 10,000 մարդ, որոնք իրանց գործադուլներ էին համարում. Նրանց առաքումը նստեց 46,000 րուբլի, բայց այնուամենայնիւ անգործների թիւը չէ պակասում: Դուման վճռեց դադարեցնել նպաստ տալը, որովհետև շատ դէպքերում օգտվում են այնպիսի անձինք, որոնք ոչ մի յարաբերութիւն չունեն գործադուլների հետ: Այս օրերումս Պետերբուրգ է ճանապարհվում Մոսկվայի միտրոպոլիտը համառուսական ժողովի գումարման նիստի խորհրդին մասնակցելու համար:

ԵԼԻԶԱՒԵՏԳՐԱԴ, 23 օգոստոսի: Հարուստ գիւղացիների դաստակերտները և տնտեսութիւնները յաճախակի այրվելու մասին գիւղական իշխանութիւնների հաղորդագրութիւնների պատճառով, գեներալ-նահանգապետը հրաման արձակեց, որով առաջարկում է հասարակութեան չը վախենալ վրէժից և յանձնել հրձիգներին, որոնք կենթարկվեն զինուորական դատարանին:

Հասարակութիւնը, որը ժամանակին չի յանձնի մեղաւորին, կենթարկվի դրամական տուգանքի:

ԿԻԵՎ, 23 օգոստոսի: Ժամանակաւոր գեներալ-նահանգապետը յայտնել է պօլիտեխնիկումի տեսչին, որ նա չի թոյլ տայ բանալու ինստիտուտը, մինչև որ տեսուչը չը տայ երաշխաւորութիւն միտինգների գումարելը ինստիտուտում կողմնակի անձանց մասնակցութեամբ: Առաջին ուսանողական ժողովը տեղի կունենայ շաբաթ օրը:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴՈՒՇԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Պուշկին, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերքաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզական. հ.
Կ. Մ. ՑԻՆՕՎԱՆԻ—9½—10 ժ. ատամ. ներքին և ներվային:
Մ. Գ. ԱԻՆՑԻՆԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ և վերքաբուժութիւն:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութ[illegible], կանանց և երեխայոց հ.
[illegible] ՏԷՆԼԻՆ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
[illegible] ՏԷՐ [illegible]ԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և [illegible]
ՏԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—3 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒԼԻՆՈՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց [illegible]
[illegible] ԱԲԵԱՆՑ—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.
[illegible] 50 կ. [illegible]
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Գ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ, մասնաւորապէս կրծքի:
Քննութիւն և բուժում X ճառագայթներով առաւօտեան ժամը 10—11 և երեկոյեան 5—7:
Բէյբութովսկայա փող. տ. № 7 (Վէյցելի հիւրանոցի մօտ): 10—30

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով).

	Պօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր. երեկ.
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 16 ր. գիշ.
Ալէքսանդրոպօլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր. ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր. ցեր.
Ալէքսանդրոպօլից դուրս գալը	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր. գիշ.
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10 ր. գիշ.
Կարս հասնելը	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր. առ.

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
դասագիրք ստորին դասատների համար
յօրինեց Մ. ԱԲԵՂԵԱՆ, ուսուցիչ ս. էջմիածնի Գ. ճեմարանի
Գինն է 75 կոպէկ:
Դպրոցների համար, եթէ անմիջապէս հեղինակից առնուազն 25 օրինակ գնելու լինեն, 75 կոպէկի տեղ 50 կոպէկ: Ճանապարհածախսը (25 օրինակի համար պօստի փաթեթով 1 րուբլի) գնողների վրա է: Պէտք է վճարել կանխիկ, կամ պատուէր տալ վերադիր վճարով: Պատուէրներն սնյապաղ և ճշտութեամբ կը կատարվեն: Դիմել՝ Эчміадзинъ, Академія, Мануку Абегянъ, կամ Թիֆլիսի գրավաճառներին:
(ե. հ. ու. կ.) 3—20

Թիֆլիսի Մողնու ս. Գէորգ եկեղեցու ծխական հոգաբարձութիւնը այսու յայտարարում է, որ՝
ԳԱՅԻԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԸ
վերաբացվում է առաջիկայ սեպտեմբերի 1-ից երկու նախապատրաստական և առաջին հիմնական դասարաններով: (Դալ տարիները աստիճանաբար կը բացվեն յաջորդ դասարանները՝ միջնակարգ դպրոցի ծրագրով:
Դպրոցը և նրա գրասենեակը գտնվում են Սօլօլակ, Պասկեվիչի փողոց, տուն Տէր-Աստուրովի № 13 (улица Паскевича, домъ Теръ-Асатуровы, Сололаки).
ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ ԿԱԶՄՎԱԾ Է
Աշակերտուհիների համար խնդիրները ընդունվում են ներկայ օգոստոսի 15-ից մինչև 24 ը. իսկ 25-ին առաւօտեան ժամը 9-ին այն ամենքը, որոնք մինչև այդ օրը խնդիրք ներկայացրած կը լինեն, այլ և նախկին աշակերտուհիները, որոնց վկայականները մնում են դպրոցում, հրաւիրվում են ներկայանալու դպրոցը՝ քննութեան ենթարկվելու համար:
Ուսման վճարը որոշված է 20 րուբլի՝ երկու նախապատրաստականների համար և 30 ր.՝ առաջին հիմնական դասարանի համար: Վճարի կէսը տրվում է օգոստոսի 25-ից մինչև 30-ը: (Ձրիավարժների թիւը լինելու է բոլոր աշակերտուհիների թւի մի տասներորդը):
(օգ. 3, 6, 12, 20, 25, 30) 5—7

Շնորհակալիք
Վանոյի «Հայկական» ընթերցարանիս վարչութիւնը ստացաւ Տեար Խորէն Խրիմեանէ քառասուն երեք կտոր գիրք, որ ազգասիրաբար նուիրած է:
Վարչութիւնս կուգայ իւր խորին շնորհակալութիւն յայտնել սոյն ազգասէր բարերարայ:
'Ի դիմաց
Վարչութեան «Հայկական» ընթերցարանիս.
Ատենադպիր՝ Արայ Գալեանց
Ատենապետ Կ. Մանդիկեանց

ՀՐԱՒԷՐ
Նորին Վեհափառութեան կարգադրութեան համաձայն Կուկիայի ս. Աստուածածին եկեղեցու ծխականները, երկու սեռից ևս, հրաւիրվում են ամսիս 27-ին, ցերեկվայ ժամը 12-ին, որոշելու յիշեալ եկեղեցու գաւթում գտնված ծխական դպրոցի խնամակալ Ն. Գրիգորեանի իրաւասութեան սահմանները:
Աւագ-երէց՝ Ալէքսանդր քահ.
Տէր-Յովհաննիսեան
(հ. ու. կ.) 2—3

Մակար Տէր-Սարգսեանի
ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ
Գինը 30 կոպ.
ԴԱՍԱԳԻՐՔ ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ
Գինը 50 կոպ.
Уроки чистописанія
Գինը 25 կոպ.
100-ից ոչ պակաս գնողներին 20% զեղջ:
Դիմել՝ Թիֆլիս—Կենտրօնական գրավաճառանոցին: Երևան՝ յօրինողին:
2—10

„ՎԵՐՍԱԼ"
[ՀԻՒՐԱՆՈՑ]
Քաղաքի ամենակենտրօնական մասում
Վօրօնցօվի արձանի մօտ,
ուր շաղկապվում են տրամվայի բոլոր գծերը: Համարները սկսած 1 րուբլուց և աւելի: Ցարմար կերպով կահաւորված համարներ՝ բոլոր յարմարութիւններով: Բաղանիք, դուշ, տէլէֆօն, էլէքտրական լուսաւորութիւն ընդհանուր շինութեան մէջ: Օդի և լոյսի առատութիւն: Կատարեալ մաքրութիւն և կարգապահութիւն: Խնդրում ենք չը լսել գործակալներին, իբր թէ ազատ համար չը կայ և այլն:
(կ. ե. հ.) 14—24

Մի օրիորդ, որը սովորել է կար ու ձևի ուսումնարանում և ձեռագործ, և ունի վկայական, ցանկանում է դասեր ունենալ հայոց ուսումնարանում կամ արհեստանոցում: Համաձայն է գնալ ուրիշ քաղաքներ: Հասցէն՝ Эриванская площадь, Калбасный магазинъ «Corboz» Սարգսեանցին
(ու. կ. ե.) 1—3

ԲԺԻՇԿ
Լևոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն՝ անկիւն Գօլովինսկի պրօսպէկտի և Կազենսկայեա փողոցի, տուն Բ... մաժչեանի: Մուտքը Կազեննի փողոցից
(ա. օ.) 217—30

Լոյս տեսաւ
ԴԱՍԱԳԻՐՔ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ
Քաղաքական մաս
ԱՒՍՏՐԱԼԻԱ, ԱՖՐԻԿԱ, ԱՍԻԱ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ
Կազմեց՝ Լևոն Բաբայեան
Գինը 65 կոպ.
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ». 1—5

ՇՈՒՇԻ Նոր բացվող երկսեռ
Նոց-Դպրոցի կազմակերպող
յանձնաժողովը հրաւիրում է վերատես
բարձրագոյն կրթութեամբ, հմուտ մանկա
վարժուհի:
Պայմանների համար դիմել՝ Шуша, Е
гатуровой:
(ա. օ.) 1—6

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ
Հայոց դպրոցների համար
ՏԵՏՐԱԿ Ա.
ՈՒՂԻՂ ԳԾԵՐ
Պատրաստական դասընթաց
Կազմեց՝ Լևոն Բաբայեան
Գինն է 20 կոպ.
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ» 1—5

Գէչրլու գիւղի (Էջմիածնի գաւ.) միդասեան ուսումնարանի համար հարկաւոր է մի փորձված ուսուցիչ գիր- դասելի ճեմարանաւարտ կամ Ներսիսեան, ռոճիկ 400 ր., սենեակ վարելիք.
Անդամ հոգաբարձութեան՝
Ս. Գասպարեան
Հասցէն՝ Ст. Сардаръ-Абадъ, Зак. Ж. Д., Въ сел. Гечерлу, Папечителю Гечерлинскаго училища.

„ՓԵԹԱԿ"
Կար ու ձևի ուսումնարան և արհեստանոց
ՕՐ. Մ. ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆԻ
Վերանորոգվում է աշակերտուհիների ընդունելութիւնը օգոստոսի 25-ից առաւօտեան ժ. 10 ից մինչև եր. ժ. 4-ը:
Архивный пер. д. № 4 Калантаровой.
(ու. կ. ե.) 1—3

Եղվարդի ծխական դպրոցի համար արդէն վարձված են ուսուցիչներ. պատասխան չը ստացողները ազատ են:
Ի դիմաց հոգաբարձութեան՝
աւագ ուսուցիչ՝ Պօղոս Պօղոսեանց

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатня, Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 5